



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » Տպպի 2019 թվականի N 4/4

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԸՆԹԱՑԻԿ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը
պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի
ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ հաշվեքննության
արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ,
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/17 որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2019 թվականի փետրվարի 28-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 7-րդ վարչությունը, հաշվեքննության է ենթարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսատնտեսական գործունեությունը:

Ղեկավարության պատասխանատվությունը

Նախարարության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև Նախարարության ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Նախարարության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն, իր կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ հնարավոր խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որ ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռք բերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ հնարավոր խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհամապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի, «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն», «Նորքի տուն-ինտերնատ» և «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ների 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների, իսկ «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 2018թ. ինը ամիսների հաշվետվություններն արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և հաշվեքննության ու ստուգման ֆինանսական տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում: «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ների 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների հաշվետվությունները ոչ արժանահավատ են, հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնց հետևանքները համատարած չեն և ստուգման ֆինանսական տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում թույլ են տրվել էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, որոնց հետևանքները համատարած չեն և հաշվեքննության ու ստուգման համապատասխանության տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի, «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» և «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն», «Նորքի տուն-ինտերնատ», «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և ստուգման համապատասխանության տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

Կարեն Կարապետյան՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
___ փետրվարի 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» պետական կառավարչական հիմնարկի գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում ու իրականացնում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Պետական բյուջեից նախարարությանը¹ 2017թ. նախատեսվել է 2,232,149.7 հազ. դրամ, 2018թ.՝ 2,246,123.8 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 2017թ՝ 2,179,192.3 հազ. դրամ, 2018թ. 9 ամիսներին՝ 1,420,785.54 հազ. դրամ:

Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունները լրացվել են ոչ ճիշտ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրի կատարման վերաբերյալ ներկայացված բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին

2017թ. և 2018թ. 9 ամիսների հաշվետվությունները (Ձև 2) լրացնելիս չեն պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2015թ. թիվ 176-Ն որոշման պահանջները: Մասնավորապես՝

- 2017թ. և 2018թ. 9 ամիսների հաշվետվությունների «Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)», ինչպես նաև 2018թ. 9 ամիսների հաշվետվության «Դրամարկղի մնացորդ» սյուները չեն լրացվել: 2017թ. համապատասխան հաշվետվությունը ճիշտ չի լրացրել նաև Բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալությունը (այսուհետ՝ ԲՍՓ), ինչի հետևանքով 1,228.9 հազ. դրամը ներկայացվել է որպես դրամարկղի մնացորդ:
- Հաշվետվությունում որոշ փաստացի ծախսեր արտացոլվել են ոչ ճիշտ ժամանակահատվածի համար, ինչի հետևանքով հնարավոր չի եղել ամբողջովին հավաստիանալ դրա արժանահավատության մեջ: Մասնավորապես՝ Զբաղվածության գործակալության աշխատակիցների 2018թ. հունվար ամսվա արձակուրդային գումարները չեն արտացոլվել տվյալ տարվա համապատասխան հաշվետվությունում:
- Առանձին ստորաբաժանումների 2017թ. հաշվետվությունների տարեսկզբին հաստատված նախահաշիվների և նախարարության կողմից ներկայացված ամփոփ հաշվետվության միջև անճշտության չափը կազմել է 13,612.9 հազ. դրամ:

¹ Ներառում է Զբաղվածության և Բժշկա-սոցիալական փորձաքննության գործակալությունները:

➤ Զբաղվածության գործակալության 2018թ. 9 ամիսների հաշվետվության մեջ տարեկան նախահաշվում ընթացիկ ծախսերի գծով կատարված փոփոխությունները 527,423.8 հազ. դրամի փոխարեն ներկայացվել է 223,781.6 հազ. դրամ, անճշտության չափը կազմել է 303,672.2 հազ. դրամ: 2018թ. 9 ամիսների փաստացի ծախսերի մեջ ներառվել են նախահաշվով չալանավորված ծախսեր (կապի ծառայությունների գծով՝ 12.9 հազ. դրամ և տրանսպորտային նյութերի գծով՝ 443.4 հազ. դրամ):

Աշխատանքի վարձատրություն հողվածով նախատեսվել է 2017թ. 2,001,062.8 հազ. դրամ, 2018թ.՝ 2,022,889.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 2017թ՝ 1,990,371.34 հազ. դրամ, 2018թ. 9 ամիսներին՝ 1,322,049.9 հազ. դրամ: Զբաղվածության գործակալության Ձև 2 հաշվետվության «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի փաստացի ծախսի մեջ չեն ներառվել տարեսկզբի և տարեվերջի արձակուրդային գումարների ճշգրտումները: Կիրառվող հաշվապահական ծրագրում ընթացիկ և հաջորդ ամիսների արձակուրդային վճարների հաշվառման անհնարինության պատճառով հնարավոր չի եղել լիարժեք գնահատել վերոնշյալ հոդվածով 2017թ. և 2018թ. 9 ամիսների փաստացի ծախսերի արժանահավատությունը:

Արձանագրվել են հաշվապահական հաշվառման վարման թերացումներ:

Աշխատավարձի, անաշխատունակության նպաստների, վերջնահաշվարկի և արհմիութենական վճարների հաշվարկներում արձանագրվել է, ինչպես ավելի, այնպես էլ պակաս հաշվարկման 8 դեպք: Խեղաթյուրումների ընդհանուր չափը կազմել է 66.8 հազ. դրամ: 2017թ. և

2018թ. 9 ամիսներին՝ նախարարության աշխատակազմի աշխատակիցներից 156.4 հազ. դրամի չափով արհմիութենական անդամավճարի հաշվարկ չի իրականացվել, իսկ Զբաղվածության գործակալությունում արհմիութենական անդամավճարի հաշվարկները կատարվել են չպահպանելով կանոնադրությամբ սահմանված 1%-ի պահանջը, փոխարենը հաշվարկը կատարվել է 0.6%-ի չափով:

Զբաղվածության գործակալությունում հաշվապահական ծրագրում առկա խնդիրների հետևանքով, եթե աշխատակցին տրամադրված արձակուրդի օրերը ներառել է հաջորդող ամիսը, արհմիութենական անդամավճար չի հաշվարկվել և չի գանձվել:

Նախարարության աշխատակազմի աշխատակիցների ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերը համապատասխան հրամանով չի տեղափոխվել հաջորդ տարի, իսկ ամենամյա արձակուրդները տրվել են ընթացիկ տարվա հասանելիք օրերից՝ հաշվի չառնելով նախորդ ժամանակաշրջանից կուտակված և չօգտագործված արձակուրդային օրերը, ինչի հետևանքով արձանագրվել են կրկնահաշվարկի դեպքեր: Մասնավորապես, աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետին 2017-2018թթ. ժամանակաշրջանի համար օրենքով սահմանված 24 աշխատանքային օրվա փոխարեն

տրամադրվել է 42 օր տևողությամբ արձակուրդ, չպահպանելով օրենսդրության պահանջները: Արձակուրդից հետո վերջինս ազատվել է աշխատանքից, իսկ կատարված ոչ ճիշտ հաշվարկի հետևանքով 592.9 հազ. դրամով (ներառյալ հարկերը) ավելի է վճարվել:

**Աշխատաժամանակի
հաշվարկման
տեղեկագրերում առկա
են խեղաթյուրումներ:**

Նախարարության աշխատակազմի 2017թ. սեպտեմբեր ամսվա աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրում աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետը, գտնվելով գործուղման մեջ, տոնական ոչ աշխատանքային օրվա հաշվին, տվյալ ամսվա համար սահմանված աշխատանքային օրերից մեկ օր ավելի է

աշխատել: Ընդ որում, գործուղման հրամանում ոչ աշխատանքային օրվա համար փոխհատուցում չի նախատեսվել, սակայն տեղեկագրում համապատասխան նշում կատարելու հետևանքով նրան 31.1 հազ. դրամով ավելի է վճարվել:

Զբաղվածության գործակալության տնտեսագետը 2017թ. դեկտեմբեր ամսին փաստացի գտնվել է արձակուրդում, մինչդեռ աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրում կատարվել է նրա ներկայությունը հավաստող նշում:

Որոշ դեպքերում անաշխատունակության թերթիկների հիման վրա կատարված վճարումները զբաղվածության գործակալությունում իրականացվել են փաստաթղթերի պատճենի հիման վրա:

Էներգետիկ ծառայություններ հողվածով նախատեսվել է 2017թ. 43,896.4 հազ. դրամ, 2018թ.՝ 49,128.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 2017թ.՝ 36,014.6 հազ. դրամ, 2018թ. 9 ամիսներին՝ 23,246.76 հազ. դրամ:

Էներգետիկ ծառայություններ հողվածի 2017թ. փաստացի ծախսերի արժանահավատությունը հնարավոր չի եղել լիարժեք գնահատել, քանի որ Զբաղվածության և ԲՄՓ գործակալությունների կողմից դեկտեմբեր ամսվա ջեռուցման ծախսերի փոխհատուցման հաշիվները հաշվեքննություն իրականացնող անձանց չի տրամադրվել: Մասնավորապես, Նորք ՍԾՏԻԿ

**Հաշվապահական
հաշվառման գործընթացը
ոչ լիարժեք կազմակերպելու
հետևանքով վճարվել է
597.2 հազ. դրամի տույժ:**

հիմնադրամի դեկտեմբեր ամսվա (185.2 հազ. դրամ), Երևանի թիվ 105 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի նոյեմբեր ամսվա (56.2 հազ. դրամ), Վանաձորի, Տաշիրի և Զերմուկի ՍԾՏԻԿ-երի դեկտեմբեր ամսվա բնական գազի դիմաց վճարումները 23.11.2018թ. դրությամբ չէին կատարվել:

2018թ. 9 ամիսներին էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման ծառայությունների դիմաց վճարումները սահմանված ժամկետում չկատարելու պատճառով՝ վճարվել է 597.2 հազ. դրամի տույժ: Միաժամանակ, 2017թ. դեկտեմբեր ամսվա բնական գազի մատակարարման ծառայության համար նույն հաշիվը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից դուրս է գրվել երկու անգամ, ինչը

նախարարության կողմից հաշվի չի առնվել և կատարվել է կրկնակի վճարում, որի հետևանքով առաջացած 330.8 հազ. դրամ կանխավճարը 23.11.2018թ. դրությամբ դեռևս մարվում էր:

2017թ. ջեռուցման ծախսերը ԲՍՓ գործակալության կողմից չեն հիմնավորվել, իսկ Զբաղվածության գործակալությունում համապատասխան փաստաթղթերը գտնվել են ոչ պատշաճ վիճակում:

ԲՍՓ գործակալության կողմից ջեռուցման համար կատարված 110.2 հազ. դրամի ծախսը չի հիմնավորվել: Մասնավորապես՝ 2017թ. հունվար, փետրվար և մարտ ամիսներին, փաստացի տարբեր աշխատանքային օրերի թվի պարագայում, «Ռ. Հարությունյանի անվան Աբովյանի

բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ջեռուցման ծախսերի փոխհատուցման համար յուրաքանչյուր ամիս դուրս է գրվել 16.0 հազ. դրամի հարկային հաշիվ, իսկ «Թիվ 19 պոլիկլինիկա» և «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ների կողմից ծառայությունը դեռևս փաստացի մատուցված չլինելու պարագայում դուրս են գրվել 62.2 հազ. դրամի հաշիվներ: Ավելին՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից դուրս գրված տարբեր հաշիվներում ջեռուցման ծառայության միավորի գները տարբեր են:

Զբաղվածության գործակալությունում ջեռուցման ծառայությունների փոխհատուցման ծախսերը կատարվել են հարկային և/կամ հաշվարկային հաշիվների և արձանագրությունների պատճենների հիման վրա, որտեղ փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները բավարար ընթեռնելի չեն, ինչը անհնարին է դարձրել ծախսի արժանահավատության գնահատումը:

Ներքին գործուղումների համար ոչ արժանահավատ, ինչպես նաև ծախսը հիմնավորող փաստաթղթերի ոչ լիարժեք լինելու պարագայում կատարվել է սահմանվածի առավելագույն չափով (1 օրը՝ 20.0 հազ. դրամ) վճարում

Ներքին գործուղումներ հոդվածով 2017թ. նախատեսվել է 67,411.2 հազ. դրամ, 2018թ.՝ 67,411.2 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 2017թ.՝ 58,095.94 հազ. դրամ, 2018թ. 9 ամիսներին՝ 33,688.27 հազ. դրամ:

Ներքին և արտասահմանյան գործուղումների դեպքում բացակայել են փաստացի կատարված ծախսերի մասին հաշվետվությունները: 2017թ. ներքին բոլոր գործուղումների, իսկ 2018թ. 9 ամիսներին գերակշիռ մասի համար

որպես գիշերավարձ հատկացվել է ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ սահմանվածի առավելագույն չափը, մեկ օրը՝ 20.0 հազ. դրամ, ինչը չի համապատասխանել մարզերի հյուրանոցների գներին:

Չի պահպանվել վերոնշյալ որոշման 9-րդ կետի պահանջը՝ վճարումները կատարվել են գործուղումից հետո: Նախարարության և Զբաղվածության գործակալության գործուղման վկայականները չեն համապատասխանել սահմանված օրինակելի ձևին: Գործուղման որոշ վկայականներ սահմանված կարգով չեն լրացվել:

Արձանագրվել են նաև գործուղման ծախսերը հիմնավորող ոչ արժանահավատ փաստաթղթերի առկայության դեպքեր: Մասնավորապես՝ 2017թ. փետրվար ամսին գործուղման փաստաթղթերում «Վասպուրական» ՍՊԸ-ի հաշիվ-ապրանքագրի վրա դաջված է հազիվ ընթռնելի «Վիրտոշ» ՍՊԸ-ի կնիքը: Երևույթն արձանագրվել է նաև հունիս ամսին և այլն:

ԲՍՓ գործակալության կողմից որոշ տարածքների վարձակալության գները հիմնավոր չեն:

ԲՍՓ գործակալությունն, իր մասնագիտական որոշ հանձնաժողովների գործունեությունն իրականացրել է հանրապետության տարբեր մարզերում վարձակալած տարածքներում: Հաշվեքննությամբ պարզվել է, որ մի շարք

դեպքերում, վարձակալված տարածքների գները էապես տարբերվել են նույն նպատակի համար վարձակալված այլ նմանատիպ տարածքների գներից, ինչպես նաև որոշ դեպքերում տվյալ տարածքի շուկայական միջին գներից: Մասնավորապես, եթե Երևան քաղաքում վարձակալված տարածքի 1 քմ-ի ամսական արժեքը կազմել է 933 դրամ, ապա Ալավերդի քաղաքում վարձակալված տարածքի 1 քմ-ի ամսական արժեքը կազմել է 2036 դրամ, իսկ Գյումրի քաղաքում երկու հանձնաժողովների համար վարձակալված տարածքների 1 քմ-ի արժեքը մի դեպքում կազմել է ամսական 1977

դրամ, մյուս դեպքում՝ 1529 դրամ:

ԲՍՓ գործակալությունում բենզինի հաշվառումը հիմնավոր չէ՝ նորմատիվից ավելի է 1,762.1 հազ. դրամով:

ԲՍՓ գործակալությունում 2017թ. և 2018թ. 9 ամիսներին ծախսվել է 45 400 լիտր ռեզուլյար տեսակի բենզին: Վազ-21074 մակնիշի 15 և Վազ-2106 մակնիշի 2 ավտոմեքենաների համար նորմատիվից ավելի է հաշվարկվել

ընդհանուր 4 900 լիտր ռեզուլյար տեսակի բենզին՝ 1,762.1 հազ. դրամ արժեքով:

2017թ. բենզինի բաշխման գործընթացից հետո որևէ հաշվառում չի իրականացվել, չեն կազմվել ուղեգրեր և չի իրականացվել յուրաքանչյուր ուղերթի համար բենզինի ծախսի և հաշվիչի ցուցմունքի հաշվառում ու փաստաթղթավորում, ինչը հնարավորություն չի տվել գնահատել ծախսի արժանահավատությունը: 2018թ. 9 ամիսներին նույնպես բացակայել են ուղեգրերը և ծախսը հիմնավորող փաստաթղթերը, իսկ մեքենայի հաշվիչի հաշվառումը կատարվել է ամսական կամ եռամսյակային կտրվածքով, որի ուսումնասիրությունից պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում հաշվիչի ցուցիչը չի համապատասխանել նորմատիվով սահմանված ծախսին: Ընդ որում՝ արձանագրվել է հաշվիչի ցուցիչի նորմատիվով սահմանված ծախսի ինչպես ավելի, այնպես էլ պակաս լինելու դեպքեր:

Մասնագիտական հանձնաժողովների տնային այցերը կազմակերպելու նպատակով, անկախ բնակավայրի հեռավորությունից, բոլոր ուղղությունների համար հաշվարկվել է 60 կմ հեռավորություն և դրան համապատասխան բենզինի ծախս, ինչն անտրամաբանական է, քանի որ բոլոր բնակավայրերը կամ Երևան քաղաքի շրջանները

հանձնաժողովների տեղակայման վայրից չեն կարող ունենալ միևնույն հեռավորությունը: Միաժամանակ, բենզինի տրամադրումից հետո փաստացի կատարված տնայցերի հաշվառում չի իրականացվել:

Չեն կատարվել զբաղվածության պետական ծրագրերը:

2017թ. զբաղվածության 16 պետական ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 1,981,070.6 հազ. դրամ, կատարողականը կազմել է 23.3%, իսկ 2018թ. 14 պետական ծրագրերի իրականացման համար՝ 1,732,341.0 հազ. դրամ, կատարողականը՝ 12.2%: 2017թ. ծրագրերի մեծ մասի չկատարելը պայմանավորված է ՀՀ կառավարության որոշեցրած քաղաքականությամբ: Հաստատված 16 ծրագրերից ֆինանսավորվել են չորսը, ընդ որում, այդ չորս ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տարվա ընթացքում ևս նվազեցվել են, ինչի հետևանքով ծրագրերն իրականացվել են ոչ ամբողջությամբ՝ առաջադրված ցուցանիշները չեն ապահովվել: 2018թ. ծրագրերի չկատարման հիմնական պատճառը ՀՀ կառավարության կողմից դրանց նախահաշիվների սահմանված ժամկետում չհաստատելն է, ինչի հետևանքով նախատեսված ժամկետներում դրանք չեն կատարվել:

Կենտրոնացված գնումների

հետևանքով նվազել է

պատասխանատվությունը,

սահմանափակվել է

մասնակցությունը և ստեղծվել են ոչ

հավասար մրցակցային պայմաններ:

դեղորայքի գնման գործընթացը կազմակերպվել է կենտրոնացված կարգով:

Նախարարության ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կարիքների համար կենտրոնացված կարգով գնումների գործընթացի կազմակերպումը թերի է և արդյունքում հեռու է օրենսդրությամբ սահմանված կենտրոնացված լինելու տրամաբանությունից:

Եթե Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, որտեղ գործել են նախարարության ենթակայության տակ գտնվող մեկից ավելի կազմակերպություններ, հնարավոր է անհրաժեշտ ապրանքները համախմբել մեկ չափաբաժնում և կազմակերպել կենտրոնացված կարգով գնման գործընթաց, ապա՝ Վարդենիս, Գավառ, Դիլիջան, Բյուրեղավան, Խարբերդ, Կապան քաղաքներում կենտրոնացված կարգով գնման ընթացակարգի անվան ներքո մրցույթը կազմակերպվել է ըստ առանձին կազմակերպության կարիքների, ինչը, բնականաբար, իր տրամաբանությամբ կենտրոնացված գնման գործընթաց համարել չի կարելի:

Կենտրոնացված կարգով գնումների կազմակերպման գործընթացի ռիսկայնությունը բավականին բարձր է, ինչը պայմանավորված է գնման գործընթացը համակարգողի լիազորությունների կենտրոնացմամբ: Գնահատող հանձնաժողովի

կազմում կազմակերպություններն ապահովել են ֆորմալ ներկայություն (սովորաբար հինգ հոգուց բաղկացած հանձնաժողովում կազմակերպությունը ունեցել է մեկ ներկայացուցիչ), չեն ունեցել որոշիչ ձայնի իրավունք, ինչը նվազագույնի է հասցրել պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի պատասխանատվությունը մրցույթի գործընթացում:

Կենտրոնացված կարգով գնումների կազմակերպման գործընթացում սահմանափակվել է մասնակցությունը, քանի որ գնման գործընթացը կենտրոնացված եղանակով կազմակերպելու պարագայում, չափաբաժինների խմբավորման արդյունքում, չափաբաժնի արժեքը դրամային արտահայտությամբ բարձրանում է, ինչն անհնարին է դարձնում փոքր, միջին կամ նոր ձևավորվող ընկերությունների մասնակցությունը: Մինչդեռ, գնումների մասին օրենսդրությունը միտված է մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը:

Կենտրոնացված կարգով գնումների կազմակերպման գործընթացը շատ հաճախ ժամանակավրեպ է, ինչի պատճառով կազմակերպությունները ստիպված են լինում անհրաժեշտ ապրանքները ձեռք բերել ոչ կենտրոնացված կարգով, ինքնուրույն՝ տեղում հրատապ մրցույթներ իրականացնելու միջոցով, և սա այն դեպքում, երբ գնումների գործընթացի թվացյալ կենտրոնացման արդյունքում կազմակերպություններում կրճատվել են գնումների համակարգողի հաստիքները: Արդյունքում, մի շարք ապրանքներ ձեռք են բերվել ավելի բարձր գներով, իսկ գործընթացներն իրականացվել են օրենսդրական պահանջների հետ զգալի անհամապատասխանություններով, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ գնումների օրենսդրությունը շրջանցելով:

Կենտրոնացված կարգով գնումների կազմակերպման գործընթացում ֆինանսական միջոցներ չնախատեսելու հետևանքով՝ գնումների պլանը հրապարակվել է առանց նախահաշվային գների, ինչը սահմանափակել է մասնակիցների կողմից տեղեկատվություն տիրապետելու գործընթացը, մինչդեռ միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնումների կազմակերպումը օրենսդրության պահանջ է: Ավելին՝ գնման գործընթացի համակարգողի լիազորությունների կենտրոնացման պայմաններում դիսկն էլ ավելի է մեծանում:

Մի շարք գնման առարկաների տեխնիկական բնութագրերը հստակ չեն սահմանվել: Արդյունքում, գնման առարկայի տեխնիկական բնութագրերը դարձել են ոչ միանշանակ և երկակի մեկնաբանվող, ինչը ոչ միայն կարող է սահմանափակել տարբեր կազմակերպությունների մասնակցության հնարավորությունները, այլ նաև մատակարարի անբարեխիղճ լինելու պարագայում կարող է հանգեցնել խնդիրների և անորակ ապրանքի մատակարարման: Մասնավորապես՝ տավարի, խոզի և հավի մսի, խտացրած կաթի ու կարագի տեխնիկական բնութագրերում բացակայել են այդ ապրանքատեսակների համար սահմանված ԳՕՍՏ-երի վրա կատարված հղումները, ինչի հետևանքով 2017թ. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում

«Դեագա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված տավարի միսը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին՝ միսը եղել է անորակ, չեն պահպանվել սանիտարահիգիենիկ նորմերը և բացակայել են անասնաբուժական փաստաթղթերը: Մեկ այլ դեպքում՝ ծխախոտի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրի ոչ լիարժեքությունը սահմանափակել է տարբեր, այդ թվում արտադրող կազմակերպությունների մասնակցությունը:

Սննդամթերքի ձեռք բերման նպատակով 2017թ. գնումների պլանը հրապարակվել է ապրանքախմբի ամբողջական քանակի համար, որից հետո մրցույթներն իրականացվել են ըստ առանձին մարզերի՝ չպահպանելով գնումների պլանի կազմման և լրացման նվազագույն պահանջները:

Նախարարության կարիքների համար 2017թ. իրականացված գնումների գործընթացի արդյունքում կնքվել է գնման 230 պայմանագիր՝ 1,496,345.6 հազ. դրամ արժեքով, իսկ 2018թ. 9 ամիսներին՝ 91 պայմանագիր՝ 1,268,122.6 հազ. դրամ արժեքով:

Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման մրցույթների հրավերներով 2017-2018թթ. մի շարք չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերում սահմանվել է, որ պարագաները պետք է լինեն գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկվող կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրվող: Վերոնշյալ տեխնիկական բնութագիրը պարունակել է ուղիղ հղում՝ «գերմանական տեխնոլոգիայով արտադրվող», որը սահմանափակել է այլ տեխնոլոգիայով և համարժեք կամ ավելի բարձր որակի արտադրանք ունեցող ընկերությունների մասնակցությունը և հակասում է գնումների օրենսդրությանը: Անհրաժեշտ է նշել նաև, որ վերոնշյալ անհամապատասխանությունը արձանագրվել էր նաև ՀՀ վերահսկիչ պալատի նախկինում կատարված վերահսկողության արդյունքում:

Բժշկասոցիալական և Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների գնումների գործընթացը իրականացվել է առանց մրցույթի՝ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի կիրառման միջոցով, որի արդյունքում «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի հետ 2017թ. և 2018թ. կնքվել է համապատասխանաբար՝ 181,950.2 հազ. դրամ և 181,450.2 հազ. դրամ արժեքով պայմանագրեր: Որպես մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի ընտրության հիմնավորում ներկայացվել է հիվանդանոցային բուժօգնության, ներառյալ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների, ծառայությունների ձեռք բերումը: Միաժամանակ, չի հիմնավորվել «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի ընտրությունը, քանի որ համանման ծառայություններ կարող են մատուցել նաև ՀՀ-ում գործող մի շարք այլ բժշկական հիմնարկներ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերումն իրականացվել է առանց մրցույթի, որի արդյունքում յուրաքանչյուր տարի 314,044.3 հազ դրամի պայմանագիր է կնքվել «Նորք

սոցիալական ծառայությունների տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի հետ: Մեկ անձից գնումը իրականացվել է հիմք ընդունելով դեռևս 2010թ. սեպտեմբերի 22-ի ՏՄՊՊՀ որոշումը, որը 2010թ. դրությամբ սահմանել է 9 ծառայությունների նկատմամբ հիմնադրամի մենաշնորհային դիրքը: Մինչդեռ, որոշումից անցել է առնվազն յոթ տարի և ոլորտում մենաշնորհային դիրքը հիմնավորման կարիք ունի: Դրանից զատ նշված 9 ծառայություններից բացի, 2017-2018թթ. պայմանագրերում ներառվել են մեկ տասնյակից ավելի այլ ծառայություններ (օրինակ՝ լոկալ ցանցի սպասարկում, վեբ կայքի սպասարկում, համակարգչային սարքավորումների վերանորոգում և այլն), որոնց համար հիմնադրամը մենաշնորհային դիրք չունի և չի կարող ունենալ:

Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին: Արձանագրված թերությունները, անհամապատասխանություններն ու սահմանափակումները խաթարել են մրցակցության հավասար պայմանների սկզբունքները, որի հետևանքով 2017թ. և 2018թ. հաղթել և ծառայությունները մատուցել է միևնույն «Հունան Մանթաշյան» ԱԶ-ն՝ համապատասխանաբար՝ 7,700.0 հազ. դրամի և 7,000.0 հազ. դրամի պայմանագրերի շրջանակներում: Յուրաքանչյուր միջոցառման ժամանակ նախատեսվել է սնունդ 15, շապիկ և գլխարկ՝ 45 կամավորի համար: Շապիկների, գլխարկների թվի ավելի նախատեսելը չի հիմնավորվել: ՀՀ տասը մարզերում իրականացվող ծրագրերը խմբավորվել են մեկ չափաբաժնում, ինչի հետևանքով սահմանափակվել է տեղական ոչ խոշոր՝ մանր ու միջին կազմակերպությունների մասնակցությունը, նվազել է մասնակիցների քանակը:

Կենտրոնացված կարգով և նախարարության կարիքների համար կազմակերպված գնումների գործընթացի փաստաթղթաշրջանառությունը գտնվել է ոչ պատշաճ վիճակում և չի համապատասխանել օրենսդրության պահանջներին: Բացակայել են գնահատող հանձնաժողովի հայտարարության և հրավերի տեքստը հաստատելու մասին արձանագրությունները, չի կազմվել և պատվիրատուի կողմից չի հաստատվել ընթացակարգի արձանագրությունները, հաճախ բացակայել են փաստաթղթերի բնօրինակները և թղթային տարբերակները, մի շարք դեպքերում՝ ստորագրությունները: 2017թ. արդյունքներով սահմանված ժամկետներում չի կազմվել և չի հրապարակվել գնումների գործընթացի մասին հաշվետվությունը:

Գնումների համակարգման գործառույթն իրականացնող ստորաբաժանման աշխատակիցների հիմնական մասը, այդ թվում՝ բաժնի պետը, չեն ունեցել օրենսդրությամբ պահանջվող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող համապատասխան որակավորում և, հետևաբար, իրավասու չեն եղել գործընթացը համակարգելու համար:

Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված

լիազորությունների իրականացման ֆինանսավորում ծրագիրն իրականացվել է ՀՀ կառավարության 2006թ. թիվ 928-Ն որոշման հիման վրա, ըստ որի՝ Երևան, Արարատ, Վանաձոր, Գյումրի (2 գործակալություն), Ջերմուկ համայնքների սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները հանձնվել են քաղաքային համայնքների ենթակայությանը՝ համայնքային հիմնարկի կարգավիճակով:

Համաձայն օրենսդրության՝ պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից ֆինանսավորման, որի համար 2017-2018թթ. նախատեսվել է համապատասխանաբար՝ 504,600.5 հազ. դրամ և 504,261.9 հազ. դրամ, որի գերակշիռ մասը (480,989.8 հազ. դրամ) կազմել են աշխատավարձի գծով ծախսերը:

Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ քաղաքային համայնքների ընտրությունը չի հիմնավորվել, համայնքների կողմից ծրագրի արդյունավետ իրականացման որևէ գնահատական չի տրվել:

Ներքին հսկողական համակարգը լիարժեք չի գործել:

Վերը նշված խնդիրների բնույթը և ներքին աուդիտի կողմից դրանք չարձանագրելու հանգամանքը, թույլ է տալիս եզրակացնել, որ նախարարությունում առկա է ներքին հսկողական համակարգի խնդիր: Մասնավորապես՝ դիտարկվող ժամանակահատվածում ինչպես նախարարությունում և առանձնացված ստորաբաժանումներում, այնպես էլ՝ ստուգված ՊՈԱԿ-ներում կամ ներքին աուդիտ չի ընդհանրապես իրականացվել կամ իրականացվել է, սակայն վերոնշյալ խնդիրները չեն հայտնաբերվել:

Առարկություններ եւ բացառություններ են ներկայացվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետից ուշ, սակայն, ըստ էության, ուսումնասիրվել և հաշվի են առնվել:

«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի վերաբերյալ

«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացման շրջանակներում 1210 շահառուի ծառայություն մատուցելու նպատակով 2017թ. նախատեսվել է 2,176,210.5 հազ. դրամ, 2018թ.՝ 2,148,776.6 հազ. դրամ:

Ծրագրի հիմնական նպատակն է միայնակ տարեց և հաշմանդամ քաղաքացիների շուրջօրյա խնամքի ապահովումը, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը, նյութական ու կենցաղային պահանջմունքների բավարարումը, սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացումը:

Վերոնշյալ ծրագրի իրականացման նկատմամբ հաշվեքննության շրջանակներում ստուգում է իրականացվել «Նորքի տուն-ինտերնատ» և «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների 2017թ. և 2018թ. 9 ամիսների գործունեության նկատմամբ²:

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին տարեկան 230 շահառուի ծառայություն մատուցելու համար 2017-2018թթ. նախատեսվել է համապատասխանաբար՝ 293,999.5 և 316,045.2 հազ.դրամ: ՊՈԱԿ-ի փաստացի ծախսը 2017թ. կազմել է 282,984.5 հազ. դրամ, 2018թ. 9 ամիսներին՝ 203,976.0 հազ. դրամ:

Ստուգման արդյունքում ՊՈԱԿ-ի փաստացի խնամվողների թվաքանակի շարժի ուսումնասիրությունից պարզվել է, որ 30.12.2016-09.01.2017թթ. մահացած 4 անձ հաշվառվել են սննդամթերքի բաց թողնման ճաշացուցակ-պահանջագրերում, ինչի հետևանքով 20 մարդ/օրվա հաշվարկով 16 520 դրամի ավելի սննդի ծախս է կատարվել:

Այլ աղբյուրներից ստացած եկամուտները նախարարության կողմից սուբսիդիայի պայմանագրերը կնքելիս հաշվի չեն առնվել:

ՊՈԱԿ-ը, ինչպես 2017թ., այնպես էլ 2018թ. 9 ամիսներին այլ աղբյուրներից ստացել է եկամուտ, որը նախարարության կողմից սուբսիդիայի պայմանագրերը կնքելիս հաշվի չի առնվել և համապատասխան չափով

ֆինանսավորումից նվազեցում չի կատարվել: Մասնավորապես՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ ՊՈԱԿ-ը տարածքի վարձակալության դիմաց «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ից 2017թ. և 2018թ. 9 ամիսներին ստացել է 1,493.3 հազ. դրամ, աճուրդով վաճառված տրանսպորտային միջոցի դիմաց՝ 516.0 հազ. դրամ: Ստացված 2,009.3 հազ. դրամ եկամուտը նախարարության կողմից սուբսիդիայի պայմանագրերը կնքելիս հաշվի չի առնվել:

ՊՈԱԿ-ի ծախսերի հիմնական մասը (2017թ.՝ 49.75%, 2018թ.՝ 46.27%)՝ 146,227.2 հազ. դրամը, բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը (128 հաստիքային միավոր):

ՊՈԱԿ-ի 2017-2018թթ. հաստիքացուցակները հաստատվել է ՀՀ կառավարության 2015թ. թիվ 1292-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներից որոշ շեղումով, ինչի հետևանքով վերելակի սպասարկողի 0.5 ավելի հաստիքային միավոր նախատեսելու հետևանքով՝ 2017թ. և 2018թ. 9 ամիսներին 930.3 հազ. դրամ ավելի է նախատեսվել և հատկացվել:

ՊՈԱԿ-ի հաստիքացուցակներով նախատեսված 128 հաստիքային միավորներից 2017թ. թափուր են եղել միջինը 23, 2018թ. 9 ամիսներին՝ միջինը 34 հաստիք:

² Հաշվեքննության առաջադրանքի համաձայն նախատեսվել էր ստուգում իրականացնել նաև «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում, սակայն ՀՀ ԱՍՀՆ նախարարի 16.11.2018թ. թիվ ՄԹ/ԱՐՄ-2118018-18 գրության համաձայն ՊՈԱԿ-ի 2017-2018թթ. ֆինանսական փաստաթղթերը առգրավված են հարուցված քրեական գործի շրջանակներում, ինչը անհնարին է դարձրել ստուգման իրականացումը:

Թափուր հաստիքների հաշվին գոյացած աշխատավարձի ֆոնդի ազատ մնացորդը հատկացվել է աշխատակիցներին որպես հավելավճարներ և պարգևավճարներ, որի հիմնական մասը (2017թ.՝ 43% և 2018թ.՝ 59%)՝ բաժին է ընկել ղեկավար անձնակազմին (ղեկավար անձնակազմի աշխատավարձի ֆոնդը կազմել է ընդհանուր ընդամենը 13%-ը): Կրտսեր բուժանձնակազմին բաժին է ընկել հավելավճարների և պարգևավճարների ընդամենը 16%-ը, այն պարագայում, երբ աշխատավարձի ֆոնդի ազատ մնացորդի հիմնական մասը ձևավորվել է հենց կրտսեր բուժանձնակազմի թափուր հաստիքների հաշվին:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել է 2017թ. 147,778.3 հազ. դրամ և 2018թ.՝ 169,818.0 հազ. դրամ):

Պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել է չհիմնավորված ծախս՝ ձեռք է բերվել 620.8 հազ.դրամի հիմնական միջոց:

ՊՈԱԿ-ը չպահպանելով ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշման պահանջները՝ 2017-2018թթ. տրամադրված սուբսիդիայի հաշվին ձեռք է բերել թվով 17 հատ հիմնական միջոց հանդիսացող ապրանքներ՝ 620.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

ՊՈԱԿ-ը 2017-2018թթ. կազմակերպել է գնման 12 ընթացակարգ, որի ընթացքում չպահպանելով գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները՝ սահմանված ժամկետներում չի հաստատել և սահմանված կարգով չի հրապարակել գնումների պլանը: Արդյունքում, գնումներն իրականացվել են առանց գնման առարկաների գնումների պլանում առկայության, մինչդեռ օրենքով արգելվում է իրականացնել գնումներ, եթե գնման առարկան արտացոլված չէ գնումների պլանում: Միաժամանակ, գնման առարկայի գնումների պլանում առկա չլինելը խոչընդոտ է հանդիսացել այլ կազմակերպությունների կողմից գնային առաջարկներ ներկայացնելու համար, իսկ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող գնումների գործընթացը դարձել է ոչ

Տեխնիկական բնութագրերի ոչ լիարժեք լինելու հետևանքով սահմանափակվել են մասնակցության հնարավորությունները:

բավարար հրապարակային և ոչ թափանցիկ: Չի սահմանվել պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող, ինչի հետևանքով ծխախոտի (1,180.8 հազ. դրամ) և տնտեսական ապրանքների (4,484.3 հազ. դրամ) գնման ընթացակարգերի նախապատրաստական փուլում

գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմվել է ոչ լիարժեք: Մասնավորապես՝ ծխախոտի դեպքում հստակ չի նշվել ապրանքի չափման միավորը, բացակայել են նաև տեխնիկական այլ պահանջներ: Տնտեսական ապրանքներից «Պոլիէթիլենային թաղանթ» և այլ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ևս կազմվել են թերի:

Արդյունքում գնման առարկաների տեխնիկական բնութագրերը դարձել են ոչ միանշանակ և երկակի մեկնաբանվող, ինչի հետևանքով սահմանափակվել են այլ

կազմակերպությունների մասնակցության հնարավորությունները, իսկ մրցույթին մասնակցել է միայն « Կարեն Սարգսյան» ԱԶ-ն, որի հետ կնքվել է ծխախոտի (1,180.8 հազ. դրամ) և տնտեսական ապրանքների (86.2 հազ. դրամ միայն նշված ապրանքների մասով) գնման պայմանագրեր:

Մերժման ենթակա կազմակերպության հետ կնքվել է 591.8 հազ. դրամի պայմանագիր:

Ծխախոտի երկրորդ խմբաքանակի գնման նպատակով հայտարարված ընթացակարգում «Կարեն Սարգսյան» ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը եղել է մերժման ենթակա: Սակայն, վերջինս հաշվի չի առնվել և կնքվել է 591.8 հազ. դրամի

պայմանագիր:

Գնումների համակարգողը չի ունեցել համապատասխան որակավորում, իսկ գործընթացի փաստաթղթաշրջանառությունը ոչ լիարժեք է:

2017թ. և 2018թ. 9 ամիսներին գնումների գործընթացի փաստաթղթերի փաթեթում բացակայել են օրենքով սահմանված մի շարք փաստաթղթեր, որոշ ընթացակարգերի համար բացակայել են գնահատման թերթիկները, կնքված պայմանագրի մասին հայտարարությունները, Պետական եկամուտների կոմիտեին ուղարկվող

հարցումը և վերջինիս պատասխանը, ընթացակարգի արձանագրությունները, ինչպես նաև մի շարք ընթացակարգի գրանցամատյանները կազմվել և հաստատվել է ժամանակային անհամապատասխանություններով: Սահմանված ժամկետներում չի կազմվել և չի հրապարակվել գնումների գործընթացի մասին հաշվետվությունը, ինչպես նաև գնումների համակարգողը չի ունեցել համապատասխան որակավորում: Վերոնշյալով պայմանավորված, հնարավոր չի եղել լիարժեք գնահատել գնումների գործընթացի օրենսդրության պահանջներին համապատասխանությունն ու թափանցիկությունը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում ներկայացվել են բացառություններ, որոնք, ըստ էության, ուսումնասիրվել եւ հաշվի են առնվել:

**Սուբսիդիայի
պայմանագիրը կնքելիս
նախարարության կողմից
հաշվի չի առնվել է 7 մլն
971 հազ. դրամի
պահեստի մնացորդները:**

«Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին³ տարեկան 250 շահառուի ծառայություն մատուցելու համար 2018թ. նախատեսվել է 352,567.1 հազ. դրամ, 9 ամիսների փաստացի ծախսը կազմել է 212,587.8 հազ. դրամ:

Պայմանագիրը կնքելիս նախարարության կողմից հաշվի չի առնվել պահեստի մնացորդները: 01.10.2018թ.-ի դրությամբ պահեստի մնացորդը կազմել է 7,971.8 հազ. դրամ, որից՝ «փափուկ գույք և հանդերձանք» հոդվածով՝

4,510.5 հազ. դրամ, «մաքրիչ և հիգիենիկ նյութեր» հոդվածով՝ 3,461.3 հազ. դրամ, ինչը նախարարության կողմից հաշվի չի առնվել և համապատասխան չափով նվազեցումներ չի արվել: Արդյունքում վերոնշյալ ապրանքատեսակների մասով ավելացել է ՊՈԱԿ-ի պահեստի մնացորդը:

ՊՈԱԿ-ի ծախսերի 44.97%-ը՝ 158,508.0 հազ. դրամ 138.75 հաստիքային միավորի համար բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը:

2018թ. հաստիքացուցակում սահմանված նորմատիվներից դերձակի 1 և խոհանոցի աշխատողի 2 ավելի հաստիքային միավորներ նախատեսելու հետևանքով՝ պետական բյուջեից 2018թ. 9 ամիսներին՝ 2,309.6 հազ. դրամ ավելի գումար է նախատեսվել և հատկացվել:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2018թ. նախատեսվել է 194,059.1 հազ. դրամ:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ հոդվածով ՊՈԱԿ-ի 2018թ. տարեկան նախահաշվով նախատեսվել է 6,500.0 հազ. դրամ կամ ամսական՝ 541.7 հազ. դրամ: Հաշվետվությունով 9 ամիսների փոխհատուցման ենթակա գումարը կազմել է 4,842.7 հազ. դրամ, իսկ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերի համաձայն՝ փաստացի ծախսը կազմել է 5,220.6 հազ. դրամ:

**ՊՈԱԿ-ի կողմից չի
ներկայացվել կատարված
ծախսերի հիմնավորումը:**

Ծախսի արժանահավատության գնահատականը հնարավոր չի եղել տալ, քանի որ ՊՈԱԿ-ը չի ներկայացրել վերոնշյալ հոդվածով պլանավորման և փաստացի ծախսի տարբերության հիմնավորումները, առավել ևս չի

հիմնավորվել մարտ (990.6 հազ. դրամ), ապրիլ (1,114.8 հազ. դրամ) և մայիս (941.2 հազ. դրամ) ամիսներին ծախսի առավել բարձր ցուցանիշները:

ՊՈԱԿ-ը 2018թ. կազմակերպել է գնման 3 ընթացակարգ, որի ընթացքում սահմանված ժամկետում չի հաստատվել և սահմանված կարգով չի հրապարակվել

³ 2017թ.գործունեության նկատմամբ ստուգում չի իրականացվել, քանի որ համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի 20.11.2018թ. N Ե1-398/1 տրամադրած տեղեկատվության, հարուցվել է քրեական գործ, որի վարույթ իրականացնող մարմնի կողմից առգրավվել են ՊՈԱԿ-ի 2017թ. ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը (հիմք ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 22.01.2018թ. արձանագրության պատճենը):

գնումների պլանը, ինչ հետևանքով գնումներն իրականացվել են առանց գնման առարկաների գնումների պլանում առկայության: Չի սահմանվել պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող: Փաստաթղթերի փաթեթում բացակայել են հրավերը և հայտարարության տեքստը հաստատելու մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունները, հայտերի գնահատման նիստի արձանագրությունները, կնքված պայմանագրի մասին հայտարարության տեքստերը և ընթացակարգի արձանագրությունները, ինչպես նաև ընթացակարգերի ընթացքում օգտագործված գրանցամատյանները չեն համապատասխանել օրինակելի ձևին:

Մենդանթերքի գնման (2,380.5 հազ. դրամ) նպատակով հայտարարված Հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի համար, առանց գնման հայտը ստանալու, պատվիրատուի ղեկավարը միանձնյա որոշմամբ գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջները չպահպանելով, սահմանել է գնահատող հանձնաժողով:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացադրություններ չեն ներկայացվել:

«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիր

«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում 649 շահառուի ծառայություն մատուցելու նպատակով 2017թ. նախատեսվել է 2,042,316.8 հազ. դրամ, 2018թ.՝ 2,017,270.6 հազ. դրամ: 2018թ. ծախսերի նվազումը 2017թ. նկատմամբ, պայմանավորված է հիմնականում սննդի գծով ծախսի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագնի նվազմամբ: Ընդ որում՝ հաշվետու ժամանակաշրջանում շահառուների թիվը մնացել է անփոփոխ:

Ծրագրի նպատակն է առանց ծնողական խնամքի մնացած ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող 0-18 տարեկան երեխաների շուրջօրյա լրիվ խնամքի երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարանով ապահովումը:

Վերոնշյալ ծրագրի իրականացման նկատմամբ հաշվեքննության շրջանակներում ստուգում է իրականացվել «**Մարի Իզմիրյանի անվան մանկատուն**» և «**Խարբերդի մասնագիտացված մանկատուն**» ՊՈԱԿ-ների 2017թ. և 2018թ. 9 ամիսների գործունեության նկատմամբ:

«**Մարի Իզմիրյանի անվան մանկատուն**» ՊՈԱԿ-ին տարեկան 100 շահառուի ծառայություն մատուցելու նպատակով 2017-2018թթ. նախատեսվել է համապատասխանաբար՝ 341,408.8 հազ. դրամ և 354,138.4 հազ. դրամ: 2018թ. **12,729.6 հազ. դրամի** չափով ֆինանսավորման ավելացումը չի հիմնավորվել, քանի որ շահառուների թիվը մնացել է անփոփոխ, ավելին՝ սննդի գծով որոշ

ապրանքատեսակների գներն էլ նվազել է: Նախարարությունն անտեսելով սուբսիդիայի պայմանագրի դրույթները, 2017թ. 7,211.7 հազ. դրամի չափով պակաս ֆինանսավորման վերաբերյալ համաձայնագիր չի կնքել:

2018թ. ֆինանսավորման ավելացումը հիմնավոր չէ: Պայմանագիր կնքելիս նախարարության կողմից հաշվի չի առնվել դրամական ազատ և պահեստի մնացորդները:

Պայմանագրերը կնքելիս, նախարարության կողմից հաշվի չի առնվել և ֆինանսավորումից չի նվազեցվել տարեսկզբի դրամական ազատ մնացորդները, հումանիտար օգնության կարգով ստացված դրամական միջոցները, ապրանքանյութական արժեքները, ինչպես նաև պահեստի մնացորդները: 2017թ. հունվարի 1-ի դրությամբ հումանիտար օգնության կարգով ստացված միջոցներից մնացորդը կազմել է 1,795.0 հազ. դրամ,

պետական բյուջեից՝ 3,787.3 հազ. դրամ, ապրանքանյութական արժեքները՝ 33,332.6 հազ. դրամ, իսկ 2018թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ դրամական միջոցները տարեսկզբի ազատ մնացորդի հետ միասին՝ 6,100.0 հազ. դրամ, ապրանքանյութական արժեքները՝ 19,931.0 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի կենցաղային և հանրային սննդի, հիգիենիկ պարագաների, փափուկ գույքի, գրասենյակային և տրանսպորտային նյութերի, դեղորայքի, տնտեսական ապրանքների պահեստի մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 9,721.4 հազ. դրամ, որից 1,783.7 հազ. դրամը պետական բյուջեի միջոցների հաշվին, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 14,854.2 հազ.դրամ, որից 3,630.0 հազ.դրամը պետական բյուջեի միջոցների հաշվին:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ ՊՈԱԿ-ն ունեցել է գերավճար, որը 01.01.2017թ. կազմել է 50.0 հազ. դրամ, 01.01.2018թ. դրությամբ՝ 9,963.6 հազ. դրամ: Ընդ որում՝ գերավճարը

Մանկատուն են ընդունվել ՊՈԱԿ-ի կանոնադրության հիմնական նպատակին չհամապատասխանող տվյալներ ունեցող երեխաներ:

համապատասխան հաշվետվությունում չի արտացոլվել:

Ստուգման արդյունքում արձանագրվել է, որ նախարարության կողմից տրված ուղեգրերով մանկատուն են ընդունվել ՊՈԱԿ-ի կանոնադրության հիմնական նպատակին չհամապատասխանող

տվյալներ ունեցող երեխաներ, որոնց թիվը 2017թ. կազմել է 8, 2018թ. 9 ամիսներին՝ 5:

Անհամապատասխանություններ են արձանագրվել նաև պայմանագրով նախատեսված և փաստացի խնամվողների թվի միջև: Այսպես, պայմանագրով տարեկան նախատեսված 100 շահառուի փոխարեն 2017թ. ցուցակային թիվը կազմել է 111-113, իսկ 2018թ. 9 ամիսներին՝ 103-111:

ՊՈԱԿ-ը չի կազմակերպել 18 տարին լրացած սաների տեղափոխումը մասնագիտացված այլ հաստատություններ, ինչի հետևանքով մանկատանը 2017թ. բնակվել են 18 տարին լրացած՝ 6, իսկ 2018թ. 9 ամիսներին՝ 18 սան: Վերոնշյալ անձանց

համար միայն սննդի գծով ծախսը 2017թ. կազմել է՝ 2,271.0 հազ. դրամ, իսկ 2018թ.՝ 5,413.7 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի ծախսերի գերակշիռ մասը (2017թ.՝ 81.2%, 2018թ.՝ 78.3%)՝ 277,045.2 հազ. դրամը, բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը (123 հաստիքային միավոր):

Աշխատավարձի գծով 2017թ. կատարված ծախսի արժանահավատության գնահատականը չի տրվել, քանի որ հարուցված քրեական գործի շրջանակներում համապատասխան փաստաթղթերը վարույթ իրականացնող մարմնի կողմից առգրավված են, իսկ 2018թ. 9 ամիսներին հիշյալ ծախսի գծով արձանագրվել է յոթ աշխատակցի՝ 48.6 հազ.դրամի չափով պակաս վճարում: 2017թ. 14,186.6 հազ դրամ, 2018թ. 9 ամիսներին 7,049.5 հազ դրամ աշխատավարձը վճարվել է կանխիկ:

Հաստիքացուցակում ավելի հաստիքներ նախատեսելու հետևանքով 33,664.5 հազ. դրամ ավելի գումար է հատկացվել

2017-2018թթ. հաստիքացուցակը հաստատելիս սահմանված նորմատիվները չպահպանելու հետևանքով յուրաքանչյուր տարի 12.2 միավորով ավելի հաստիքային միավոր է նախատեսվել, ինչի արդյունքում պետական բյուջեից յուրաքանչյուր տարի 33,664.5 հազ. դրամ ավելի

գումար է նախատեսվել և հատկացվել: 2017-2018թթ. ըստ նորմատիվների նախատեսվել է հաշվապահի 1, հաստատվել է 1.5, դաստիարակի 3, հաստատվել է 10, արատաբանի 2, հաստատվել է 6, հերթափոխային բժշկի 4.4, հաստատվել է 5.5, ոչ հերթափոխային բժշկի 3.3, հաստատվել է 2.5, հերթափոխային բուժքրոջ 8.8, հաստատվել է 6.5, ոչ հերթափոխային բուժքրոջ 3.33, հաստատվել է 8, հերթափոխային դայակի 28.9, հաստատվել է 25.9, ոչ հերթափոխային դայակի 5, հաստատվել է 8 հաստիքային միավորներ և այն:

Պաշտոնային դրույքաչափի 30%-ի հավելում է սահմանվել այնպիսի հաստիքների համար, որոնց դեպքում ՀՀ կառավարության 02.12.2010թ. թիվ 1698-Ն որոշմամբ հավելում չի նախատեսվել: Արդյունքում, պետական բյուջեից յուրաքանչյուր տարի ՊՈԱԿ-ին հատկացվել 5,132.2 հազ. դրամով ավելի գումար:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2017թ. նախատեսվել է 64,363.6 հազ. դրամ և 2018թ.՝ 77,093.2 հազ. դրամ:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները ուսումնասիրելիս արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 2018թ. համաձայն հաշվետվության այլ միջոցների հաշվին կատարվել է 10,341.5 հազ. դրամի ծախս, սակայն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից կատարված վերահաշվարկի արդյունքում այն կազմել է 9,467.8 հազ.դրամ: Այս և արձանագրված այլ դեպքերը հնարավորություն չեն տվել գնահատել ծախսի ամբողջական արժանահավատությունը:

Սննդի ձեռք բերման գծով 5,493.1 հազ. դրամ ավելի գումար է նախատեսվել և հատկացվել:

Նախարարությունը հաշվի չի առել հատուկ տիպի կրթական հաստատություններ հաճախող 30 շահառուի թիվը, ինչի հետևանքով սննդի ձեռք բերման գծով 5,493.1 հազ. դրամ ավելի գումար է նախատեսվել և հատկացրել:

Ճաշացանկ-պահանջագրերի ուսումնասիրությունից

պարզվել է, որ հումանիտար օգնության կարգով ստացված 130կգ ծուկը բաժանվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցներին՝ ամանորի կապակցությամբ:

«ՀՀ մանկատներում խնամվող դպրոցահասակ երեխաներին դրամական աջակցության տրամադրում» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների համաձայն՝ մանկատունը դպրոցում սովորող երեխաներին ապահովել է անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով: 2017թ. գումար է հատկացվել ինչպես դպրոց հաճախող, այնպես էլ տնային ուսուցում անցնող միջին ամսական 46 սաների, այն

Գնումների գործընթացը եղել է ոչ հրապարակային և ոչ թափանցիկ, որոշ դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերը գրեթե ամբողջովին բացակայել են:

դեպքում, երբ դպրոց հաճախողների ցուցակային թիվը կազմել է 30: Դպրոց չհաճախող 16 սաների համար բյուջեից 480.0 հազ. դրամի չափով ավելի է չհիմնավորված ծախս է կատարվել:

2017-2018թթ. ընթացքում կազմակերպվել է գնման 6 ընթացակարգ, որի ընթացքում չպահպանելով օրենսդրության պահանջները՝ ՊՈԱԿ-ը սահմանված

ժամկետներում չի հաստատել և սահմանված կարգով չի հրապարակել գնումների պլանը, չի սահմանվել պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող: Ընթացակարգի փաստաթղթերի փաթեթից բացակայել են գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը, կնքված պայմանագրի մասին հայտարարության տեքստը և ընթացակարգի արձանագրությունը: Արդյունքում, գնումներն իրականացվել են առանց գնման առարկաների գնումների պլանում առկայության, մինչդեռ օրենքով արգելվում է իրականացնել գնումներ, եթե գնման առարկան արտացոլված չէ գնումների պլանում: Միաժամանակ, գնման առարկայի գնումների պլանում առկա չլինելը խոչընդոտ է հանդիսացել այլ կազմակերպությունների կողմից գնային առաջարկներ ներկայացնելու համար, իսկ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող գնումների գործընթացը դարձել է ոչ բավարար հրապարակային և ոչ թափանցիկ: 2017թ. արդյունքներով սահմանված ժամկետներում չի կազմվել և չի հրապարակվել գնումների գործընթացի մասին հաշվետվությունը:

Բենզինի և սննդամթերքի ձեռք բերման նպատակով հայտարարված ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի նախագահ է նշանակվել տնօրենի Ժ/պ-ն, ով ի պաշտոնե հանդիսացել է պատվիրատուի ղեկավարը և չէր կարող լինել գնահատող հանձնաժողովի անդամ կամ նախագահ: Դեղորայքի, մաքրիչ և սանհիգիենիկ նյութերի

ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգերի փաստաթղթերի փաթեթներում բացակայել են օրենքով սահմանված գրեթե բոլոր փաստաթղթերը, ինչը հնարավորություն չի տվել գնահատել գործընթացի կազմակերպման՝ ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանությունը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացառություններ չեն ներկայացվել:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին տարեկան 220 շահառուի ծառայություն մատուցելու համար 2017թ. նախատեսվել է 633,696.2 հազ. դրամ, 2018թ.՝ 655,295.7 հազ. դրամ: 2018թ. 21,599.5 հազ. դրամի չափով ֆինանսավորման ավելացումը չի հիմնավորվել, շահառուների թիվը մնացել է

ՊՈԱԿ-ի եկամտային հարկի և պետական տուրքի գծով գերավճարը 01.01.2017թ. կազմել է 5,831.54 հազ. դրամ, 01.01.2018թ.՝ 15,940.87 հազ. դրամ, ինչը հաշվետվության մեջ չի արտացոլվել:

անփոփոխ, ավելին՝ սննդի գծով որոշ ապրանքատեսակների գներն էլ նվազել է:

Համաձայն պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ ՊՈԱԿ-ն ունեցել է եկամտային հարկի և պետական տուրքի գծով գերավճար, որը 01.01.2017թ. դրությամբ կազմել է 5,831.54 հազ. դրամ,

01.01.2018թ. դրությամբ՝ 15,940.87 հազ. դրամ: Ընդ որում՝ գերավճարը հաշվետվություններում չի արտացոլվել:

Սուբսիդիայի պայմանագրերը կնքելիս, նախարարության կողմից հաշվի չեն առնվել և համապատասխան չափով չեն նվազեցվել տարեսկզբի դրամական ազատ մնացորդները, հումանիտար օգնության կարգով ստացված դրամական միջոցները, ապրանքանյութական արժեքները, ինչպես նաև պահեստի մնացորդները:

ՊՈԱԿ-ը 2017թ. հումանիտար օգնության ձևով ստացել է 9,853.7 հազ. դրամի դրամական միջոցներ, 16,947.7 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ: 2017թ. տարեսկզբի մնացորդի հետ միասին ՊՈԱԿ-ն ունեցել է 13,294.7 հազ. դրամի դրամական միջոցներ և 41,517.0 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ:

01.01.2018թ. դրամական միջոցների ազատ մնացորդը կազմել է 1,146.5 հազ. դրամ, իսկ ապրանքանյութական արժեքներինը՝ 20,956.4 հազ. դրամ: 2018թ. տարեսկզբի մնացորդի հետ միասին 01.10.2018թ. դրությամբ դրամական միջոցները կազմել են 10,203.9 հազ. դրամ, ապրանքանյութական արժեքները՝ 34,622.7 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի սննդի, հիգիենիկ պարագաների, լվացող նյութերի, տնտեսական ապրանքների, տրանսպորտային նյութերի, փափուկ գույքի, դեղերի պահեստի մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 21,696.4 հազ.դրամ, որից՝ 10,040.5 հազ.դրամը պետական բյուջեի միջոցների հաշվին, 01.01.2018թ. դրությամբ՝ 23,789.3 հազ. դրամ, որից՝ 11,933.0 հազ. դրամը պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ստուգման արդյունքում պարզվել է, որ նախարարության ուղեգրերով մանկատուն են ընդունվել ՊՈԱԿ-ի կանոնադրության հիմնական նպատակին չհամապատասխանող տվյալներ ունեցող երեխաներ: Անհամապատասխանություններ են արձանագրվել նաև պայմանագրով նախատեսված և փաստացի խնամվողների թվի միջև: Այսպես, պայմանագրով տարեկան նախատեսված 220 շահառուի փոխարեն 2017թ. և 2018թ. 9

ՊՈԱԿ-ը կատարել է կանոնադրական պարտականությունների հետ առնչություն չունեցող ծախսեր:

ամիսներին միջին ցուցակային թիվը կազմել է 224: ՊՈԱԿ-ը չպահպանելով օրենսդրության պահանջները կատարել է կանոնադրական պարտականությունների հետ առնչություն չունեցող ծախսեր: Այսպես՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ից ձեռք է բերել 236.2 հազ. դրամի գյուղատնտեսական նշանակության ապրանքներ: «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ից՝ 350.0 հազ.դրամի

նախագծման և փորձագիտական աշխատանքներ: Հումանիտար օգնության կարգով ստացված միջոցներից 17.02.2017թ. 2,036.0 հազ. դրամը փոխանցել է որպես եկամտային հարկ, այն դեպքում, երբ վերջինիս գծով ունեցել է գերավճար, հետագայում վերականգնել է օգնության հաշվետեամարից կատարված ծախսը և այլն:

ՊՈԱԿ-ի ծախսերի գերակշիռ մասը (2017թ.՝ 75.6%, 2018թ.՝ 73.1%)՝ 479,301.6 հազ. դրամը բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը (2017թ.՝ 218.5, 2018թ՝ 217.46 հաստիքային միավոր): Աշխատավարձի գծով 2017թ. կատարված ծախսի արժանահավատության գնահատականը չի տրվել, քանի որ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի տվյալները լիարժեք չեն (հաշվարկված եկամտային հարկի գումարը, հիվանդության, հղիության և ծննդաբերության նպաստների գումարները չեն համապատասխանել եկամտային հարկի հաշվետվություններով ներկայացված տվյալներին, հաշվարկված և վճարման ենթակա աշխատավարձի գումարը չի համապատասխանել փաստացի փոխանցված գումարներին և այլն):

2017-2018թթ. հաստիքացուցակները հաստատվել են սահմանված նորմատիվներից շեղումներով, ինչի հետևանքով 2017թ. 1.7, 2018թ. 0.66 հաստիքային ավելի միավորներ նախատեսելու հետևանքով պետական բյուջեից 1,310.8 հազ. դրամ ավելի է հատկացվել: 2017թ. ըստ նորմատիվների նախատեսվել է դաստիարակի 11.8, հաստատվել է 15, սոցիալական մանկավարժի 4.4, հաստատվել է 1-ը և այլն:

Պաշտոնային դրույքաչափի 30%-ի հավելում է սահմանվել այնպիսի հաստիքների համար, որոնց դեպքում ՀՀ կառավարության 02.12.2010թ. թիվ 1698-Ն որոշմամբ հավելում չի նախատեսվել: Արդյունքում, պետական բյուջեից 2017 և 2018թթ. 9 ամիսներին 15,974.4 հազ. դրամ ավելի է վճարվել:

Հաստիքացուցակներում հաստիքային ավելի միավորներ նախատեսելու հետևանքով պետական բյուջեից 1,310.8 հազ.դրամ ավելի է հատկացվել:

Աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերի և աշխատանքային պայմանագրերի ուսումնասիրության

արդյունքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ չորս բժիշկներ և ՊՈԱԿ-ի տնօրենը (0.5 դրույք) ծառայություններ են մատուցել առանց աշխատանքային պայմանագրերի, գերազանցվել է ամենօրյա աշխատաժամանակի թույլատրելի տևողությունը: Օրինակ՝ մեկ հաստիքային միավոր զբաղեցնող տնտեսուհին նաև 0,5 դրույքով կատարել է ոչ հերթափոխային բուժքույրի պարտականություններ, մեկ հաստիքային դրույք զբաղեցնող էլեկտրիկը 0,5 դրույքով հնոցապան է աշխատել, մեկ հաստիքային դրույք զբաղեցնող տնտեսագետը 0,5 դրույքով հաշվապահի ծառայություններ է մատուցել: ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալին ամենամյա արձակուրդների ընթացքում փոխարինել է պարետը, որը միաժամանակ աշխատել է որպես կոշկակար: Պարետի պաշտոնի անձնագրով նման

Ճամբարներում և առողջարաններում երեխաներին խնամելու համար կատարված ծախսը չի հիմնավորվել:

պարտականություն չի նախատեսվել: ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանի համաձայն մանկատնից դուրս երեխայի շուրջօրյա խնամքն իրականացնող աշխատողին նախատեսվել է վճարել օրական 7000 դրամ, արդյունքում 2017թ. վճարվել է 1,935.2 հազ. դրամ, (այդ թվում հիվանդանոցներում խնամելու համար 787.3 հազ.դրամ, ճամբարներում և առողջարաններում

խնամելու համար՝ 1,148.0 հազ.դրամ), իսկ 01.10.2018թ. դրությամբ՝ 2,367.5 հազ. դրամ (այդ թվում՝ հիվանդանոցում խնամելու համար 1,464.5 հազ. դրամ, ճամբարներում և առողջարաններում՝ 903.0 հազ. դրամ): Ընդ որում, համապատասխան հրամանը ճամբարներում և առողջարաններում երեխաներին խնամող աշխատակիցներին վճարում կատարելու մասին դրույթ չի պարունակել:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2017թ. նախատեսվել է 154,394.6 հազ. դրամ: 07.11.2017թ կնքված համաձայնագրով պայմանագրի, հաստատուն ծախսերի գծով ծառայության մատուցման առավելագույն գինը ավելացվել է 3,688.5 հազ.դրամով՝ կազմելով 158,083.1 հազ.դրամ: 29.12.2017թ կնքված թիվ 2 համաձայնագրով աշխատավարձի վճարման և դրան հավասարեցված վճարների հոդվածով նախատեսված միջոցներից 5,007.3 հազ.դրամը պակասեցվել և տեղափոխվել է փոփոխական ծախսերի գծով նախատեսված՝ սննդի ձեռք բերմանը, կազմելով 163,090.4 հազ. դրամ:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վերաբերյալ ներկայացված հաշվետվություններն ուսումնասիրելիս արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, որոնք հնարավորություն չեն տվել գնահատել ծախսերի արժանահավատությունը, մասնավորապես՝ 2017թ. էներգետիկ ծառայությունների գծով ՊՈԱԿ-ն ունեցել է 1,781.4 հազ. դրամի դեբիտորական պարտք, որը հաշվետվությունում չի արտացոլվել, ավելին՝ այլ միջոցների հաշվին 442.0 հազ. դրամով ավելի ծախս է ներկայացվել: Հաշվետվությունում՝ կոմունալ ծախսերի գծով՝ այլ միջոցների հաշվին կատարված ծախսը պակաս է ներկայացրել 601.5 հազ. դրամով:

Նույն ծախսի գծով 2018թ.՝ պետական բյուջեի միջոցների հաշվին 366.9 հազ. դրամով ավելի է ներկայացրել և այլն: Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման գծով 2017թ. ՊՈԱԿ-ը ծախս ընդհանրապես չի կատարել, բայց հաշվետվությունում ներկայացրել է 800.0 հազ.դրամի ծախս: Այլ ծախսեր հոդվածով ևս 2017թ. ծախս չի կատարվել, բայց հաշվետվությունով 1,100.0 հազ.դրամի ծախս է ներկայացվել:

Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո իրականացվել է 7,835.6 հազ. դրամի ապրանքների գնում:

ՊՈԱԿ-ը 2017-2018թթ. կազմակերպել է գնման 12 ընթացակարգ, որի ընթացքում 2017թ. չի պահպանել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման պահանջները: Գնումների պլանում չեն լրացվել գնման առարկաների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կոդերը: ՊՈԱԿ-ի կողմից

մատակարարների հետ կնքված պայմանագրի գնի ավելացման համաձայնագրով մատակարարվող ապրանքների քանակները չի նշվել: Միաժամանակ, պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո փաստացի իրականացվել է 7,835.6 հազ. դրամի ապրանքների ձեռքբերում և դրա դիմաց վճարում:

Մենդանթերքի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցած «Դեագա ՍՊԸ»-ի հայտում բացակայել է տեխնիկական բնութագիրը և հայտի

Շրջանցելով գնումների օրենսդրությունը իրականացվել է 397.3 հազ. դրամի ապրանքների գնում, իսկ մերժման ենթակա կազմակերպությունների հետ կնքվել է 4,771.0 հազ. դրամի պայմանագրեր:

ապահովումը, ինչը օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հայտը մերժելու հիմք է հանդիսանում: Սակայն հայտը չի մերժվել և կնքվել է 184.8 հազ. դրամի պայմանագիր: 2018թ. «Կարեն Սարգսյան» ԱԶ-ի կողմից հայտով ներկայացված վճարման պահանջագրում գործարքի վճարման նպատակ դաշտը չի լրացվել, իսկ «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի

հայտում բացակայել է ապրանքների տեխնիկական բնութագրերը: Օրենսդրության պահանջների համաձայն, վերոնշյալ հայտերը ենթակա են եղել մերժման, սակայն «Կարեն Սարգսյան» ԱԶ-ի հետ կնքվել է 1,443.7 հազ. դրամի, «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի հետ՝ 3,142.5 հազ. դրամի պայմանագրեր: Տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրերը հստակ չեն սահմանվել, ինչի հետևանքով չկայացած չափաբաժինների մասով մրցույթից հետո «Գեոթերմ» ՍՊԸ-ի հետ, փաստացի շրջանցելով գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը, կնքվել է պայմանագիր և իրականացվել է 397.3 հազ. դրամի ապրանքների գնում:

2018թ. ՊՈԱԿ-ը սահմանված ժամկետներում չի հաստատել և սահմանված կարգով չի հրապարակել գնումների պլանը, ինչի հետևանքով գնումներն իրականացվել են առանց գնման առարկաների գնումների պլանում առկայության, մինչդեռ օրենքով

արգելվում է իրականացնել գնումներ, եթե գնման առարկան արտացոլված չէ գնումների պլանում: Միաժամանակ, գնման առարկայի գնումների պլանում առկա չլինելը խոչընդոտ է հանդիսացել այլ կազմակերպությունների կողմից գնային առաջարկներ ներկայացնելու համար, իսկ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող գնումների գործընթացը դարձել է ոչ հրապարակային և ոչ թափանցիկ: Իրականացված ընթացակարգերում բացակայել են օրենսդրությամբ սահմանված մի շարք փաստաթղթեր, մասնավորապես՝ բոլոր ընթացակարգերում բացակայել են մրցույթի հրավերի և հայտարարության տեքստը հաստատելու մասին նիստի և գնահատման նիստի արձանագրությունները, հանձնաժողովների անդամների գնահատման թերթիկները և ընթացակարգերի արձանագրությունները: Մի շարք ընթացակարգերում բացակայել են նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները և կնքված պայմանագրի մասին հայտարարության տեքստը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացադրություններ չեն ներկայացվել:

«Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» ծրագիր

«Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացման շրջանակներում 2017թ. 621 շահառուի ծառայություն մատուցելու նպատակով նախատեսվել է 846,372.9 հազ. դրամ, իսկ 2018թ. 400 շահառուի համար՝ 646,080.7 հազ. դրամ:

Ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել անապահով ընտանիքի 6-18 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակությունը, աջակցել նրանց օրինական շահերի պաշտպանությանը, սննդով, հագուստով և կենցաղային այլ իրերով ապահովմանը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպմանը:

Վերոնշյալ ծրագրի իրականացման նկատմամբ հաշվեքննության շրջանակներում ստուգում է իրականացվել «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» և «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ների 2017թ. և 2018թ. 9 ամիսների գործունեության նկատմամբ:

«Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին 2017թ.՝ 120, իսկ 2018թ. 100 շահառուի ծառայություն մատուցելու համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 143,899.3 և 125,752.6 հազ. դրամ:

31.12.2017թ. դրությամբ ՊՈԱԿ-ի 128,616.2 հազ. դրամ փաստացի ծախսի շրջանակներում ծառայություն մատուցված շահառուների միջին ցուցակային թիվը կազմել է 81, իսկ 01.10.2018թ. դրությամբ ՊՈԱԿ-ի փաստացի ծախսը կազմել է 79,455.3 հազ. դրամ, շահառուների միջին ցուցակային թիվը՝ 65:

ՊՈԱԿ-ի ծախսերի գերակշիռ մասը (2017թ.՝ 70.8%, 2018թ.՝ 73.2%)՝ 2017թ. 93,265.0 հազ. դրամ (84 հաստիքային միավոր), իսկ 2018թ. 84,600.0 հազ. դրամ (75 հաստիքային միավոր) բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը:

Ներքին գործուղումներ հողվածով 2017-2018թթ. նախատեսվել է տարեկան 720.0 հազ. դրամ: Վճարումները իրականացվել են գործուղումից հետո՝ չպահպանելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի պահանջները:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2017թ. նախատեսվել է 50,634.4 հազ. դրամ և 2018թ.՝ 41,152.6 հազ. դրամ:

Գնումների գործընթացը եղել է ոչ հրապարակային և ոչ թափանցիկ, գնումները իրականացվել են առանց գնումների պլանում առկայության:

2017-2018թթ. կազմակերպվել է գնման 13 ընթացակարգ, որի ընթացքում 2017թ. չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման, իսկ 2018թ. ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշման 4-րդ կետի պահանջները՝ սահմանված ժամկետներում չեն

հաստատվել և սահմանված կարգով չեն հրապարակվել ամբողջական գնումների պլանները, ինչպես նաև չի սահմանել պատասխանատու ստորաբաժանում, մինչդեռ օրենքով արգելվում է իրականացնել գնումներ, եթե գնման առարկան արտացոլված չէ գնումների պլանում: Միաժամանակ, գնման առարկայի գնումների պլանում առկա չլինելը խոչընդոտ է հանդիսացել այլ կազմակերպությունների կողմից գնային առաջարկներ ներկայացնելու համար, իսկ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող գնումների գործընթացը դարձել է ոչ հրապարակային և ոչ թափանցիկ:

2017թ. արդյունքներով սահմանված ժամկետներում չի կազմվել և չի հրապարակվել գնումների գործընթացի մասին հաշվետվությունը, ինչի հետևանքով չի պահպանվել օրենսդրության հիմքում դրված հաշվետվողականության սկզբունքը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացառություններ չեն ներկայացվել:

«Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին 2017թ.՝ 126, իսկ 2018թ. 100 շահառուի ծառայություն մատուցելու համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 159,157.6 և 133,623.9 հազ. դրամ:

31.12.2017թ. դրությամբ ՊՈԱԿ-ի փաստացի ծախսը կազմել է 140,792.9 հազ. դրամ, որի շրջանակներում ծառայություն մատուցված շահառուների միջին ցուցակային թիվը կազմել է 81, իսկ 01.10.2018թ. դրությամբ ՊՈԱԿ-ի փաստացի ծախսը կազմել է 87,795.6 հազ. դրամ, շահառուների միջին ցուցակային թիվը՝ 62:

ՊՈԱԿ-ի ծախսերի գերակշիռ մասը (2017թ.՝ 68%, 2018թ.՝ 70%)՝ 2017թ. 100,159.7 հազ. դրամ (90 հաստիքային միավոր), իսկ 2018թ. 84,600.0 հազ. դրամ (75 հաստիքային միավոր) բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը:

2017թ. և 2018թ. 9 ամիսներին տնտեսագետի թափուր հաստիքի պարտականությունները համատեղության կարգով իրականացրել է հաշվապահը (0.5 դրույքով): Իսկ 2018թ. հունվարից վերջինս տնօրենի հրամանի համաձայն հանդիսացել է նաև գնումների համակարգողը՝ չունենալով օրենսդրությամբ պահանջվող համապատասխան որակավորում:

Ներքին գործուղումներ հողվածով 2017-2018թթ. նախատեսվել է տարեկան 720.0 հազ. դրամ: Վճարումները իրականացվել են գործուղումից հետո՝ չպահպանելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի պահանջները:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2017թ. նախատեսվել է 58,999.9 հազ. դրամ, իսկ 2018թ.՝ 49,023.9 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ը 2017-2018թթ. կազմակերպել է գնման 7 ընթացակարգ, որի ընթացքում սննդամթերքի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպությունների փաթեթներում բացակայել են գնման առարկա հանդիսացող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչի հետևանքով ներկայացված որոշ հայտեր պետք է գնահատվեին ոչ բավարար և մրցույթը պետք է հայտարարվեր չկայացած: Սակայն գնահատող հանձնաժողովը, հայտերը գնահատել է բավարար և կնքվել են գնման պայմանագրեր: Միաժամանակ, այդ պայմանագրերը կնքելու օրը հանդիսացել է օրենսդրությամբ սահմանված անգործության ժամկետ, որի ընթացքում կնքված պայմանագրերը առոչինչ են: «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն 01.10.2018թ. դրությամբ չի իրականացրել 100 զույգ 501.0 հազ. դրամ արժեքով ձմեռային կոշիկների մատակարարումը, ինչի հետևանքով դրանց բաշխումը շահառուներին չի իրականացվել, իսկ թվով 5 անվանում հանդերձանքը (սպորտային համազգեստներ, հողաթափեր և այլն) մատակարարվել է չպահպանելով ժամկետները:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացադրություններ չեն ներկայացվել:

«Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին 2017թ.՝ 120, իսկ 2018թ. 100 շահառուի ծառայություն մատուցելու համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 144,781.3 և 113,528.3 հազ. դրամ: Շահառուների թվի նվազմամբ պայմանավորված 07.08.2017թ. կողմերի միջև կնքված համաձայնագրով 2017թ. ֆինանսավորումը նվազեցվել է, թվով 100 շահառուների համար կազմելով 136,487.3 հազ. դրամ:

31.12.2017թ. դրությամբ ՊՈԱԿ-ի փաստացի ծախսը կազմել է 121,771.3 հազ. դրամ, որի շրջանակներում ծառայություն մատուցված շահառուների միջին ցուցակային թիվը կազմել է 67, իսկ 01.10.2018թ. դրությամբ՝ 51,681.1 հազ. դրամ, շահառուների միջին ցուցակային թիվը՝ 40:

Վերակազմակերպումից հետո, գործառույթների փոփոխությամբ պայմանավորված, 2018թ. օգոստոս ամսին ՊՈԱԿ-ի և նախարարության միջև պետք է կնքվեր նոր պայմանագիր, որը սահմանելու էր վերջինիս գործունեության

ուղղությունները, ինչպես նաև ֆինանսական միջոցները: 01.10.2018թ. դրությամբ նոր պայմանագիր դեռևս չէր կնքվել և ՊՈԱԿ-ը իր ծախսերի որոշ մասը (հիմնականում աշխատավարձի գծով) կատարել է նախորդ պայմանագրի շրջանակներում հատկացված միջոցների հաշվին:

Երեխաներին չի տրամադրվել օրական մեկանգամյա սնունդ

ստացող երեխաներին 01.09-01.10.2018թ. ժամանակահատվածում օրական մեկ անգամյա սնունդ չի տրամադրվել, չի կատարվել նաև երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը:

ՊՈԱԿ-ի ծախսերի գերակշիռ մասը (2017թ.՝ 69%, 2018թ.՝ 78%)՝ 2017թ. 93,438.5 հազ. դրամը (83 հաստիքային միավոր), իսկ 2018թ. 71,064.0 հազ. դրամը (76.7 հաստիքային միավոր) բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը:

Չեն պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները, ինչի հետևանքով 01.10.2018թ. դրությամբ դեռևս տնօրենի ժ/պ-ի հետ չէր կնքվել աշխատանքային պայմանագիր, չէր սահմանվել վերջինիս լիազորությունների ու պարտականությունների շրջանակը: Աշխատանքի ուսուցման խմբակի հրահանգիչը, պայմանագրով սահմանված համատեղության կարգով պետք է կատարեր նաև դաստիարակի գործառույթներ, սակայն համաձայն աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի, կատարել է միայն դաստիարակի գործառույթներ և վճարվել դրա համար: Սպասուհին, համատեղության կարգով, կատարել է նաև խմբակի դաստիարակի գործառույթներ, ինչի հետևանքով չի պահպանվել օրենսդրությամբ սահմանված միջանկյալ հանգստի ժամանակահատվածը:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2017թ. նախատեսվել է 51,342.8 հազ. դրամ, որը 07.08.2017թ համաձայնագրով նվազեցվել և կազմել է 45,985.2 հազ. դրամ և 2018թ.՝ 42,646.8 հազ. դրամ:

Կատարվել է 1 մլն 463 հազ. դրամի ծախս՝ առանց ծախսը հիմնավորող փաստաթղթի:

2017թ. ՊՈԱԿ-ի «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով դեկտեմբեր ամսվա ծախսը՝ 1,463.8 հազ. դրամի (էլեկտրաէներգիա 575,6 հազ. դրամ, գազի սպառում 888.2 հազ. դրամ) չափով վճարվել է մինչև

համապատասխան հաշիվ-ապրանքագրի դուրս գրելը: Արդյունքում, առանց ծախսը հիմնավորող փաստաթղթի, իրականացվել է դրամական փոխանցում:

Ներքին գործուղումներ հոդվածով 2017թ. և 2018թ. 9 ամիսներին նախատեսվել է տարեկան 720.0 հազ. դրամ: Վճարումները իրականացվել են գործուղումից հետո՝ չպահպանելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի պահանջները:

Մեքենաները բենզինով շահագործելու հետևանքով կատարվել է 325 հազ. դրամի ավելի վառելիքի ծախս:

2017-2018թթ. «ՊԱԶ» 672 և «Ռաֆ» 2203 մակնիշի մեքենաները գազով շահագործվելու հնարավորության առկայության պարագայում շահագործվել են

բենզինով, ծախսը կազմել է 650.0 հազ. դրամ, ինչի հետևանքով կատարվել է 325.0 հազ. դրամով ավելի ծախս, քան կլիներ դրանք գազով շահագործելու պարագայում:

2017-2018թթ. կազմակերպվել է գնման 11 ընթացակարգ, որի ընթացքում սննդամթերքի ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպությունների փաթեթներում բացակայել են գնման առարկա հանդիսացող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչի հետևանքով մերժման ենթակա կազմակերպությունների հետ կնքվել է 397.4 հազ. դրամի գնման պայմանագրեր:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացառություններ չեն ներկայացվել:

«Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում» ծրագիր

«Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում» ծրագրի իրականացման շրջանակներում 300 շահառուի ծառայություն մատուցելու նպատակով 2017թ. նախատեսվել է 238,100.5 հազ. դրամ, 2018թ.՝ 237,995.7 հազ. դրամ:

Ծրագրի հիմնական նպատակն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող՝ 6-18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրում, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրականացման աջակցություն:

Ծրագրի իրականացման նկատմամբ հաշվեքննության շրջանակներում ստուգում է իրականացվել **«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի** գործունեության նկատմամբ:

2017թ. և 2018թ. 100 շահառուի ծառայություն մատուցելու նպատակով, նախատեսվել է համապատասխանաբար՝ 70,051.0 հազ. դրամ և 74,896.4 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1112-Ն որոշման, նախարարությունը պետք է մշակեր և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացներ երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները: 01.10.2018թ. դրությամբ ՊՈԱԿ-ն իր գործունեությունը ծավալել է առանց այդ չափորոշիչների, քանի որ նախարարությունը դրանք չի մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը չի ներկայացրել:

Համաձայն սուբսիդիայի տրամադրման պայմանագրի, աշխատակիցների և շահառու երեխաների համար սահմանվել է տրանսպորտից օգտվելու ծախս՝ ուղեվարձ (1 անձի համար 200 դրամ): Մինչդեռ ՊՈԱԿ-ի կանոնադրությունը նման լիազորություն չի սահմանել, ավելին՝ ուղեվարձը հատկացնելու հստակ մշակված չափորոշիչներ չի մշակվել: 2017թ և 2018թ 9 ամիսներին ծախսը կազմել է 3,964.9 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի ծախսերի գերակշիռ մասը (2017թ.՝ 71.8%, 2018թ.՝ 67.1%)՝ 50,313.2 հազ. դրամը, բաժին է ընկել աշխատանքի վարձատրությանը (42.6 հաստիքային միավոր):

ՊՈԱԿ-ի 2017-2018թթ. հաստիքացուցակը հաստատվել է սահմանված նորմատիվներից որոշ շեղումով, ինչի հետևանքով սոցիալական աշխատողի 0.25 ավելի հաստիքային միավոր է նախատեսվել և 534.8 հազ. դրամի չափով ավելի գումար հատկացվել: Հաստիքացուցակով սահմանված հնոցապանի (1,3 հաստիքային միավոր) պարտականությունները՝ ներառյալ հնոցի շուրջօրյա հերթապահությունը կատարել է տնտեսվարը, ինչը վերջինիս պարտականությունը չի եղել և աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրում չի արտացոլվել: Կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն չի իրականացվել և միաժամանակ, չի պահպանվել առանձին կատեգորիայի աշխատողների համար սահմանված աշխատաժամանակի տևողությունը, աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակահատվածը:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար 2017թ. նախատեսվել է 18,737.8 հազ. դրամ, 2018թ.՝ 21,788.0 հազ. դրամ:

2018թ. ձմեռային կոշիկ շահառուներին չի հատկացվել, քանի որ «Մադել» ՍՊԸ-ն 100 զույգ ձմեռային կոշիկի (660.0 հազ. դրամ, մեկ զույգի արժեքը 6600 դրամ) մատակարարում չի իրականացրել: ՀՀ կառավարության 31.05.2007թ. թիվ 815-Ն որոշման պահանջները չպահպանելու հետևանքով, ձմեռային հանդերձանք ստացած շահառուներից 2017թ.՝ 23-ը, իսկ 2018թ.՝ 62-ը, համապատասխան հանդերձանքը ստացել է երկու տարի անընդմեջ:

**1 մլն. 75 հազ. դրամ
ընդհանուր արժեքով
բենզինի ծախսը չի
հիմնավորվել:**

2017-2018թթ. 9 ամիսներին «ՎԱԶ 21101» մակնիշի ավտոմեքենայի շահագործման նպատակով գնված 1,075.5 հազ. դրամ արժեքով 3 020 լիտր բենզինի ծախսը չի հիմնավորվել: Ավելին՝ բենզինը պահեստից

ելքագրելուց հետո, որևէ ուղեգիր չի կազմվել և չի լրացվել, մեքենայի հաշվիչի դիտարկում և հաշվառում չի իրականացվել:

2017-2018թթ. կազմակերպվել է գնման 6 ընթացակարգ, որի ընթացքում սահմանված ժամկետում չի հաստատվել և սահմանված կարգով չի հրապարակվել գնումների պլանը, չի սահմանվել պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող: Արդյունքում, գնումներն իրականացվել են առանց գնման առարկաների գնումների պլանում առկայության, մինչդեռ օրենքով արգելվում է իրականացնել գնումներ, եթե գնման առարկան արտացոլված չէ գնումների պլանում: Միաժամանակ, գնման առարկայի գնումների պլանում առկա չլինելը խոչընդոտ է հանդիսացել այլ

**ՊՈԱԿ-ը 261.2 հազ.
դրամի չափով
ապրանքները ձեռք է
բերել շրջանցելով
գնումների
օրենսդրությունը:**

կազմակերպությունների կողմից գնային առաջարկներ ներկայացնելու համար, իսկ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող գնումների գործընթացը դարձել է ոչ բավարար հրապարակային և ոչ թափանցիկ:

Նախարարության աշխատակազմի ղեկավարի հրամանով 2017թ. հունվար ամսվա կարիքների համար հանձնարարվել է սննդամթերքի ձեռքբերման նպատակով իրականացնել

մրցույթ: ՊՈԱԿ-ը չի կատարել վերոնշյալ հրամանի պահանջները, համապատասխան գնումների պլան չիրապարակելու, մրցույթ չիրականացնելու և առանց որևէ ընթացակարգ կիրառելու, շրջանցելով գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը կնքել է 261.2 հազ. դրամի պայմանագրեր:

2017թ. ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանով գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակված անձը լիազոր մարմնի կողմից համապատասխան որակավորում չի ունեցել, հետևաբար նաև նման գործառույթ իրականացնելու իրավասություն չի ունեցել, իսկ ընթացակարգերի փաթեթներում բացակայել են օրենքով սահմանված մի շարք փաստաթղթեր:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում առարկություններ եւ բացառություններ չեն ներկայացվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ

կառավարությանը

1. Քննարկել զբաղվածության ոլորտում իրականացվող քաղաքականության վերանայման հարցը, մասնավորապես՝ ապահովել պետական բյուջեով սահմանված զբաղվածության պետական ծրագրերի պատշաճ և ամբողջական իրականացումը կամ քննարկել դրանց կրճատման հարցը:

2. Քննարկել ՀՀ կառավարության 29.06.2006թ. թիվ 928-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը վերապահել սոցիալական ապահովության պետական ծառայությանը:

3. Միջոցներ ձեռնարկել «Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» ծրագիրն իրականացնող ՊՈԱԿ-ների ցերեկային խնամքի կենտրոնների վերակազմավորման գործընթացը ավարտին հասցնելու ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

1. Հսկողություն սահմանել նախարարության և նրա կազմում գտնվող կազմակերպությունների կողմից բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունների լրացման, հաշվապահական հաշվառման վարման, աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերի պատշաճ կազմման գործընթացը ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2015թ. թիվ 176-Ն հրամանի պահանջներին համաձայն:

2. Բացառել գործուղումների ժամանակ գիշերակացի ծախսերի փոխհատուցման համար հիմք հանդիսացող ծախսը հիմնավորող փաստաթղթերի ոչ լիարժեք և ոչ արժանահավատ լինելու պարագայում ծախսի փոխհա-

տուցումը, ինչպես նաև հսկողություն սահմանել ծախսը հիմնավորող և այլ անհրաժեշտ փաստաթղթերի նկատմամբ:

3. Կենտրոնացված կարգով գնումների գործընթացը համապատասխանեցնել գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության հիմքում դրված այդ ձևի տրամաբանությանը, հստակեցնել գնման առարկաների տեխնիկական բնութագրերը՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ օրենսդրության պահանջներին: Նախարարության կարիքների համար իրականացվող գնման գործընթացում բացառել տեխնիկական բնութագրերում ուղիղ հղումների, երկակի մեկնաբանվող, ոչ հստակ պահանջների առկայությունը, տարբեր չափաբաժինների մեկ չափաբաժնում խմբավորումը՝ ստեղծելով հավասար մրցակցային պայմաններ բոլոր հավանական մասնակիցների համար: Խիստ հսկողություն սահմանել գնման ընթացակարգերի փաստաթղթաշրջանառությունը պատշաճ կազմակերպելու գործընթացի վրա, գնումների համակարգումը վերապահել բացառապես օրենքով սահմանված որակավորում ունեցող մասնագետներին:

4. Ծառայությունների (բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման, սոցիալական ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման) գնման գործընթացի ժամանակ բացառել մենաշնորհային կարգավիճակ չունեցող կազմակերպություններից առանց մրցույթի գնման գործընթացի իրականացումը: Կազմակերպել մրցույթներ և ծառայություն մատուցող կազմակերպությունների ընտրությունը կատարել բացառապես մրցակցային եղանակով:

5. Միջոցներ ձեռնարկել ներքին հսկողական համակարգի գործառույթների պատշաճ իրականացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև քննարկել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարած պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը:

6. Նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների հաստիքացուցակները հաստատելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 29.10.2015թ. թիվ 1292-Ն որոշման պահանջներով՝ բացառելով սահմանված նորմատիվներից շեղումները:

7. Բյուջետային միջոցների տնտեսման նպատակով ամենամյա սուբսիդիայի տրամադրման պայմանագրերը կնքելիս հաշվի առնել կազմակերպությունների ազատ դրամական միջոցների և պահեստի ապրանքային մնացորդների առկայությունը, այդ թվում՝ այլ աղբյուրներից ստացված դրամական և ապրանքային միջոցները:

8. Սեղմ ժամկետում մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչների նախագիծը:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» պետական կառավարչական հիմնարկի մասով

Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության (Ձև 2) ուսումնասիրությունից պարզվեց, որ 2017թ. և 2018թ. 9 ամիսներին հաշվետվությունները լրացնելիս չեն պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2015թ. թիվ 176-Ն որոշման պահանջները: Մասնավորապես՝

- 2017թ. և 2018թ. 9 ամիսների հաշվետվության «Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)», ինչպես նաև 2018թ. 9 ամիսների հաշվետվության «Դրամարկղի մնացորդ» սյունները լրացված չեն:

Նախ. - Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության (Ձև 2) «Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)» սյան լրացման պահանջը կարգավորվում է ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 15-ի 706-Ն որոշմամբ:

Հարկ է նշել, որ նախարարությունը վերոհիշյալ հաշվետվության ձևը ներկայացնում է էլեկտրոնային փորձերակով և այդ սյունները պարտադիր լրացման դաշտ չեն, հաշվետվությունն ընդունվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առանց որևէ պահանջ ներկայացնելու, իսկ թղթային փորձերակը որպես հիմք պահվում է նախարարությունում: Նախկինում էլ թղթային փորձերակով ներկայացման դեպքում որևէ դիտողություն չի եղել:

➢ **Նախարարության աշխատակազմի մասով**• **Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ /411100/**

Հաշվեքննության ստանդարտներին համապատասխան կատարված ընտրանքի համաձայն՝ 2017թ.-ի և 2018թ.-ի 9 ամիսների համար ստուգվել են 17 աշխատակիցների աշխատավարձերի ծախսերը, որը 2017թ.-ին կազմել է 65,729.9 հազ. դրամ, իսկ 2018թ. 9 ամիսներին՝ 48,293.0 հազ. դրամ: Ստուգվել է աշխատակիցների աշխատանքային պայմանագրերը, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, ինչպես նաև տվյալ հոդվածին առնչվող այլ ծախսերի առկայության դեպքում դրանց հիմք հանդիսացող փաստաթղթերը: Հիմք ընդունելով տրամադրված փաստաթղթերը՝ կատարվել է հատկացված աշխատավարձի և հավելավճարների վերահաշվարկ, այնուհետև կատարված վերահաշվարկի արդյունքները համեմատվել են հաշվապահական հաշվառման ծրագրի տվյալների հետ: Հաշվեքննության ընթացակարգերի կատարման ընթացքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Համաձայն հաշվետվության 2017թ. աշխատավարձերի և հավելավճարների փաստացի ծախսը ներկայացվել է 568,993.7 հազ. դրամ, կատարած վերահաշվարկի արդյունքում կազմել է 568,309.4 հազ. դրամ (անճշտության չափը՝ 684.3 հազ. դրամ): 2018թ. 9 ամիսների համար՝ ներկայացվել է 388,832.2 հազ. դրամ, կատարած վերահաշվարկի արդյունքում այն կազմել է 388,896.3 հազ. դրամ (անճշտության չափը՝ 64.1 հազ. դրամ):

Նախ. - Անհրաժեշտություն կա Հաշվեքննիչ պալատի կողմից պարզաբանելու կատարված վերահաշվարկի արդյունքում առաջացած անճշտության՝ 684.3 հազ. դրամի հաշվարկը:

- Չի պահպանվել արհեստակցական միության կանոնադրության պահանջները, այն է. աշխատակիցների վերջնահաշվարկի գումարի և օգնության գումարների վրա արհմիութենական անդամավճարի հաշվարկ և հատկացում չի իրականացվել, որը 2017թ. կազմել է 64.7 հազ. դրամ, իսկ 2018թ. 9 ամիսներին՝ 91.7 հազ. դրամ:

Նախ. - Ըստ արհեստակցական կազմակերպության կանոնադրության՝ արհմիութենական անդամավճարի 1%-ը գանձվում է աշխատակցի եկամտից, իսկ պետական հիմնարկներում եկամտի սրացման աղբյուրը՝ սրացվող աշխատավարձն է և դրան հավասարեցված վճարումները, որի ցանկը սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և Պետական եկամուտների նախագահի համատեղ ստորագրված հրամանում (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 05 հոկտեմբերի 2018թ. 107 -Ն հրաման), որի 1-ին կետի 1-ին ենթակետի «ե»

ենթակետի համաձայն՝ Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ են համարվում աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման գումարների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվող ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարների, օգնության գումարների, ինչպես նաև վարձու աշխատողների սոցիալական կարիքների բավարարման նպատակով տրվող գումարների):

Վերոգրյալով պայմանավորված օգնության գումարներից արհմիութենական անդամավճարի 1%-ը չի գանձվում:

Իսկ ինչ վերաբերվում է աշխատակցի վերջնահաշվարկի գումարին, ապա ազատված աշխատակիցը տվյալ հիմնարկի արհեստակցական կազմակերպության անդամ չէ այլևս, այս հանգամանքով էլ պայմանավորված չօգտագործված արձակուրդի օրերի համար վճարվող հատուցումից (փոխհատուցումից) արհմիութենական անդամավճարի 1%-ը չի գանձվել:

- Անճշտություններ են հայտնաբերվել անաշխատունակության նպաստների հաշվարկներում: Կան ինչպես ավելի հաշվարկման, այնպես էլ պակաս հաշվարկման դեպքեր: Այսպես, 2017թ. ապրիլ և նոյեմբեր ամիսներին, համապատասխանաբար՝ մեկ օր ավելի է (10.7 հազ. դրամ) հաշվարկվել աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետի (Կ.Հ.) ու պակաս է (20.6 հազ. դրամ) հաշվարկվել աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետի (Հ.Մ.) անաշխատունակության նպաստները:

Նախ. - Աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետի ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների մեջ առկա է օգնության գումար, որը ըստ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների (այսուհետ՝ հաշվարկային ժամանակահատված) համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով: Սույն մասի իմաստով եկամուտ են համարվում սույն օրենքով սահմանված նպաստը, ինչպես նաև եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները: Քանի որ օգնության գումարը վերոնշյալ համարելը հրամանի համաձայն՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարում չէ, ապա չի կարող ներառվել ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների մեջ:

Վերոգրյալով պայմանավորված՝ աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետի անաշխատունակության նպաստի հաշվարկը ճիշտ է:

Նկատառում. ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ (Կ.Հ.)-ն կենսաթոշակային ապահովության վարչության աշխատակից չէ, այլ քարտուղարության ընդհանուր բաժնի:

- Անճշտություններ են առկա նաև վերջնահաշվարկի և արհմիութենական վճարների հաշվարկման գործընթացում: 2017թ. հուլիս ամսին նախարարի տեղակալի օգնականի (Խ.Ս.) աշխատանքից ազատվելու արդյունքում կատարված վերջնահաշվարկի գումարը պակաս է (1.002 հազ. դրամ) հաշվարկվել, իսկ աշխատակազմի վարորդին (Գ.Հ.) կատարված վերջնահաշվարկը ավելի է (6.0 հազ. դրամ) հաշվարկվել: 2018թ. մայիս ամսին նախարարի մամուլի քարտուղարին կատարված (Ա.Դ.) վերջնահաշվարկը նույնպես պակաս է (18.9 հազ. դրամ) հաշվարկվել, բացի այդ արհմիութենական վճար ևս չի հաշվարկվել (2.04 հազ. դրամ):

Նախ. - Նախարարի մամուլի քարտուղարին իր աշխատած ժամանակշրջանի համար հասանելիք էր 47 արձակուրդային օրեր, որից 37-ը օգտագործվել էր, իսկ մնացած 10 օրը վճարվել է, իսկ ինչ վերաբերում է վարորդ (Գ.Հ.) –ին, ապա վերջնահաշվարկը ոչ թե ավելի է (6.0 հազ. դրամ) հաշվարկվել, այլ պակաս է վճարվել (6.0 հազ. դրամ), որը երբ է պահվել գործուղման պարտքի պատճառով:

- Համաձայն 2017թ. սեպտեմբեր ամսվա աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրի՝ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետը (Ժ.Ս.) 20 աշխատանքային օրվա փոխարեն աշխատել է 21 օր: Ընդ որում՝ վերջինս 11.09.2017թ. N 116-Ա/4 հրամանի համաձայն սեպտեմբերի 17-30-ը գտնվել է գործուղման մեջ: Աշխատավարձը ավելի է հաշվարկվել 31.1 հազ. դրամով: Գործուղման հրամանում (11.09.2017թ. N 116-Ա/4) ոչ աշխատանքային օրվա փոխհատուցման համար նշում առկա չէ:

Նախ. - Նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյանն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017թ. սեպտեմբերի 11-ի N 116-Ա/4 հրամանով նույն թվականի սեպտեմբերի 17-30ը ներառյալ գործուղվել է Իտալիայի Հանրապետություն (Թուրին):

Աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 138-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ աշխատաժամանակը ներառում է նաև գործուղման ժամանակահատվածը:

Օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործուղման մեկնած աշխատողների նրա աշխատանքում է նրանց աշխատատեղի (պաշտոնի) և **աշխատավարձի պահպանումը գործուղման ամբողջ ժամանակահատվածում**, ինչպես նաև նրանց վճարվում է օրապահիկ, և հատուցվում են գործուղման հետ կապված ծախսերը:

Հարկ է նշել, որ Օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանգստյան և **օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական** և հիշատակի **օրերին կատարված աշխատանքը**, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացուցով, կողմերի համաձայնությամբ **վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի** կամ գործավարձի **առնվազն կրկնակի չափով**, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին:

Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերը սահմանվում են օրենքով:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 13-րդ հոդվածով սեպտեմբերի 21-ը սահմանվել է Հայաստանի Հանրապետության Անկախության տոն և համարվել ոչ աշխատանքային օր:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սեպտեմբերի 21-ն ազգային տոն է և այն ոչ աշխատանքային օր չի համարվում Իտալիայի Հանրապետությունում՝ Ժ. Սարգսյանը, գտնվելով գործուղման մեջ, սեպտեմբերի 21-ին աշխատել է (օրակարգը և գործուղման հաշվեկշիռները կցվում են)՝ չօգտվելով, ոչ աշխատանքային՝ տոնական օրվա համար օրենսդրորեն ամրագրված իր հանգստի իրավունքից: Հետևաբար գործուղման ժամանակահատվածում իր համար օրենսդրորեն ամրագրված ոչ աշխատանքային օրը կատարված աշխատանքի համար ևս աշխատողին վճարվել է Օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հավելումը:

Ինչ վերաբերում է գործուղման անհատական իրավական ակտով ոչ աշխատանքային օրվա (սեպտեմբերի 21-ի) վերաբերյալ նշում կատարված չլինելուն, ապա նշենք, որ նշումը կատարված չլինելը հիմք չէ աշխատողի իրավունքը չիրացնելու համար, քանի որ այդ իրավունքն արդեն իսկ ամրագրված է Օրենսգրքով:

Հարկանշական է նաև այն, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին, ինչպես բանավոր, այնպես էլ՝ գրավոր բազմիցս տվել է գործուղման ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համար ոչ աշխատանքային օրվա ընթացքում կատարված փաստացի աշխատանքի համար Օրենսգրքով սահմանված լրացուցիչ աշխատավարձի (հավելման) պարտադիր վճարման վերաբերյալ նման պարզաբանումներ:

- 2018թ. փետրվար ամսին հասարակայնության հետ կապերի բաժնի պետի (Ս.Զ.) աշխատած 4 օրվա դիմաց վճարում չի կատարվել, իսկ մարտ ամսվա աշխատավարձի հաշվարկման շախմատաձև հաշվետվության մեջ վերջինիս անունը բացակայել է: Վերջինիս 2017թ. և 2018թ. ժամանակաշրջանի համար փաստացի ձևակերպվել է արձակուրդ 42 աշխատանքային օր տևողությամբ: 07.03.2018թ. N31-Ա/3 հրամանով 2018թ. մարտի 7-ից Ս.Զ.-ն ազատվել է աշխատանքից և վերջնահաշվարկ չի կատարվել (վերջնահաշվարկի արդյունքում Ս.Զ.-ն գործատուին պետք է վերադարձներ 592.9 հազ. դրամ):

Նախ. - Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետի՝ Սիրանուշ Ջաքարյանի ազատվելու կապակցությամբ կատարվել է վերջնահաշվարկ, որի արդյունքում պարզվել է, որ վերոհիշյալ աշխատակիցը փաստացի աշխատել է 1 տարի 9 ամիս 12 օր, բայց ամենամյա հասանելիք հերթական արձակուրդից օգտագործել է 66 աշխատանքային օր և նրան 2016թ-ին, 2017թ-ին և 2018թ-ին վճարվել է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարներ: Վերոգրյալով պայմանավորված՝ Սիրանուշ Ջաքարյանին ավելի է վճարվել 23 աշխատանքային օր՝ 263.2 հազար դրամ և 1 տարի 3 ամիս լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ 217.6 հազար դրամ (ընդամենը՝ 480.8 հազար դրամ): Այդ մասին գրավոր տեղեկացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարին և ազատվող աշխատակցին, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 72.0 հազ. դրամ:

Իսկ ինչ վերաբերվում է 2018թ. փետրվար ամսին (4օր) և մարտ ամսին (4օր) աշխատած օրերի դիմաց վճարմանը, ապա դրանք հաշվարկվել և ետ են պահվել, որից հետո է կատարվել վերջնահաշվարկ:

- Ընտրանքի ձևով ուսումնասիրված աշխատակիցների մեծ մասի ամենամյա արձակուրդների չօգտագործված օրերը համապատասխան հրամանով չի տեղափոխվել հաջորդ տարի, իսկ ամենամյա արձակուրդները տրվել են տվյալ տարվա հասանելիք օրերից՝ հաշվի չառնելով նախորդ ժամանակաշրջանից կուտակված և չօգտագործված արձակուրդային օրերի քանակը: Վերջինս խնդիրներ է առաջացնում չօգտագործված օրերի հաշվարկի համար, ինչի արդյունքում արձանագրվել են արձակուրդային օրերի կրկնահաշվարկի դեպքեր:

Նախ. - ՀՀ աշխատանքային օրենսգրքում անհատական իրավական ակտով ամենամյա արձակուրդի չօգտագործած օրերի տեղափոխման մասին դրույթ նշված չէ, և այն հիմք չէ աշխատողի իրավունքը չիրացնելու համար, քանի որ այդ իրավունքն արդեն իսկ ամրագրված է Օրենսգրքով:

- Ներքին և արտաքին գործուղումների դեպքում բացակայում է փաստացի կատարված ծախսերի մասին հաշվետվությունները: 2017թ. ներքին բոլոր գործուղումների, իսկ 2018թ. 9 ամիսներին գերակշիռ մասի համար որպես գիշերավարձ հատկացվել է սահմանվածի առավելագույն չափը (1 օրը՝ 20.0 հազ. դրամ) ինչը չի համապատասխանում մարզերի հյուրանոցների գնացուցակներին:

Նախ. - ՀՀ մարզերի հյուրանոցների գնացուցակներին չհամապատասխանելու վերաբերյալ գնահատականը միանշանակ չէ, և ներքին գործուղման ժամանակ գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցումը իրականացվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման հավելված 1-ի և հավելված 2-ի դրույթներին համապատասխան՝ ներկայացված փաստացի կատարած ծախսերը հիմնավորող ֆինանսական փաստաթղթերի հիման վրա: ՀՀ մարզերում հյուրանոցային ծառայությունների գները փարսանվում են 15.000-40.000 ՀՀ դրամի սահմաններում (մեկտեղանոց համարներում), իսկ սեզոնայնությունից ելնելով գները աճում են (գործուղվողների փաստացի կատարած ծախսեր, էլեկտրոնային կայք-էջերում ամրագրված գնացուցակներ):

➤ **Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն (ԲՄՓ)**

2017թ. ԲՄՓ գործակալության աշխատակազմի ընթացիկ ծախսերի ֆինանսավորումը կազմել է 390,900.5 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 389,671.5 հազ. դրամ: (ՀԱՎԵԼՎԱԾ 1 և 3)

Գործակալությունը 2017թ. Ձև 2 հաշվետվությունը լրացրել է ոչ ճիշտ: Մասնավորապես՝ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ /411100/», «Ներքին գործուղումներ /422100/» և «Պարտադիր վճարներ /482300/» հոդվածների գծով 1,228.9 հազ. դրամը ներկայացվել է որպես դրամարկղի մնացորդ, այն դեպքում, երբ տարեվերջին դրամարկղում առկա մնացորդը վերադարձվում է պետական բյուջե:

Նախ. - ՀՀ ԲՄՓ գործակալության 2017 թվականի Ձև 2 հաշվետվության մեջ Դրամարկղի մնացորդը ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերությունն է, որը տարեվերջին վերադարձվել է պետ. բյուջե, իսկ <Պարտադիր վճարներ /482300/> հոդվածով ՀՀ ԲՄՓ գործակալությունը մնացորդ չի ունեցել:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ /411100/

- Համաձայն հաշվետվության՝ 2017թ.-ի աշխատավարձերի և հավելավճարների փաստացի ծախսը ներկայացվել է 334,215.1 հազ. դրամ, սակայն կատարած վերահաշվարկի արդյունքում կազմել է

334,358.6 հազ. դրամ (անճշտության չափը՝ 143.5 հազ. դրամ), իսկ 2018թ. 9 ամիսներին՝ ներկայացվել է 223,083.6 հազ. դրամ, կատարած վերահաշվարկի արդյունքում կազմել է 222,550.9 հազ. դրամ (անճշտության չափը՝ 532.7 հազ. դրամ):

Նախ. – ՀՀ ԲՄՓ գործակալությունը իրականացվել է 2017 թվականի համար ամբողջությամբ և 2018 թվականի 9 ամիսների համար աշխատավարձերի և հավելավճարների կրկնակի հաշվարկ և արդյունքում ստացվել է նույն փաստացի թիվը՝ 2017 թվականի համար 334215.1 հազ. դրամ և 2018 թվականի համար՝ 223083.6 հազ. դրամ՝ **անճշտություն չի հայտնաբերվել:**

Բենզինի բաշխման գործընթացի կազմակերպման վերաբերյալ

2017թ. և 2018թ. 9 ամիսներին ծախսվել է 45.4 հազ. լիտր ռեզուլյար տեսակի բենզին: Գործակալության կողմից բենզինի բաշխման գործընթացում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Գործակալությունը՝ որպես բենզինի ծախսի հաշվարկման նորմատիվ կիրառել է 100 կմ-ի համար 11.5 լիտր ցուցանիշը: Համաձայն ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման 1-ին կետի՝ գործակալության ենթակայության տակ գտնվող Վազ-21074 մակնիշի ավտոմեքենայի ծախսի նորման 100կմ-ի համար կազմում է 8.5 լիտր: Նույն կետի գ) ենթակետի համաձայն՝ 8 տարուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար ծախսային նորմատիվը կարող է ավելանալ 5%-ով, բարձր լեռնային և խոշոր քաղաքներում շահագործման պայմաններում ևս 5-10%-ով: Արդյունքում, վերոնշյալ նորմատիվի առավելագույն չափը չի կարող գերազանցել 100 կմ-ի համար 10 լիտրը: 2017-2018թթ. 9 ամիսներին գործակալության շահագործման տակ գտնվող 17 հատ Վազ-21074 մակնիշի ավտոմեքենաների համար նորմատիվից ավելի է հաշվարկվել և ծախսագրվել ընդհանուր 4.9 հազ. լիտր ռեզուլյար տեսակի բենզին՝ 1,762.1 հազ. դրամ արժեքով:

Նախ. – ՀՀ ԲՄՓ գործակալությունում շահագործվում է փարբեր մակնիշների թվով 17 ավտոմեքենա: Աշխատանքային խմբին տրամադրվել է ավտոմեքենաների մակնիշի վերաբերյալ տեղեկատվությունը՝ 1 հատ Գազ 31105 ավտոմեքենա, 2 հատ Նիվա մակնիշի ավտոմեքենա, 12 հատ Վազ 21074 մակնիշի ավտոմեքենա և 2 հատ Վազ 2106 մակնիշի ավտոմեքենա:

Համաձայն ՀՀ Կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N 1001-Ն որոշման 1-ին կետի՝

Գազ 31105 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 100 կմ-ի համար սահմանված է 11.5 լիտր բենզին + 5% /0.575/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.575/ 8 փարուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար +15% /1.725/ 0.5 միլիոնից ավելի բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում, որը կազմում է **14.375** լիտր,

Հերթապահ Վազ 2106 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 100 կմ-ի համար սահմանված է 9 լիտր + 5% /0.45/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.45/ 8 փարուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 15% /1.35/ 0.5 միլիոնից ավելի բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում, որը կազմում է **11.25** լիտր,

Գեղարքունիքի մարզի թիվ 2 ԲՄՓ-ի Վազ 2106 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 100 կմ-ի համար սահմանված է 9 լիտր + 5% /0.45/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.45/ 8 փարուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.9/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում+ 20% /1.8/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 2001 մ-ից բարձր Վարդենիս, Մարտունի և Ճամբարակ քաղաքների համար և մի շարք գյուղերի, որը կազմում է **12.6** լիտր:

2 հատ Վազ 21213 /Նիվա/ ավտոմեքենայի վառելիքի ծախսը 100 կմ-ի համար սահմանված է 11.5 լիտր + 5% /0.575/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.575/ 8 փարուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /1.15/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում, որը կազմում է **13.8** լիտր:

Գեղարքունիքի մարզի թիվ 1 ԲՄՓ-ի Վազ 21074 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 100 կմ-ի համար սահմանված է 8.5 լիտր + 5% /0.425/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.425/ 8

տարրուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.85լ/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում + 15% /1.275լ/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 1700-2000 մ Գավառ, Սևան և Հրազդան քաղաքների համար և մի շարք գյուղերի, որը կազմում է **11.475** լիպր:

Շիրակի մարզի թիվ 2 ԲՍՓՀ-ի Վազ 21074 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 8.5 լիպր + 5% /0.425լ/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.425լ/ 8 տարրուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.85լ/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում + 15% /1.275լ/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 1700-2000 մ Արթիկ, Մարալիկ և Ամասիա բնակավայրերի համար և մի շարք գյուղերի, որը կազմում է **11.475** լիպր:

Շիրակի մարզի թիվ 1 ԲՍՓՀ-ի Վազ 21074 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 8.5 լիպր + 5% /0.425լ/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.425լ/ 8 տարրուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.85լ/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում + 20% /1.7լ/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 2001 մ-ից բարձր Ծաղկահովիտ և Աշոցք բնակավայրերի և մի շարք գյուղերի համար, որը կազմում է **11.9** լիպր:

Արագածոտնի մարզի ԲՍՓՀ-ի Վազ 21074 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 8.5 լիպր + 5% /0.425լ/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.425լ/ 8 տարրուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.85լ/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում + 20% /1.7լ/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 2001 մ-ից բարձր Ապարան քաղաքի և մի շարք գյուղերի համար, որը կազմում է **11.9** լիպր:

Կոտայքի մարզի ԲՍՓՀ-ի Վազ 21074 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 8.5 լիպր + 5% /0.425լ/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.425լ/ 8 տարրուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.85լ/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում + 15% /1.275լ/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 1700-2000 մ Հրազդան քաղաքի համար և մի շարք գյուղերի, որը կազմում է **11.475** լիպր:

Հոգեբուժական մասնագիտացված ԲՍՓՀ-ի Վազ 21074 ավտոմեքենայի վառելիքի ծախսը 8.5 լիպր + 5% /0.425լ/ ձմեռային ժամանակահատվածի համար + 5% /0.425լ/ 8 տարրուց ավելի շահագործման մեջ գտնվող մեքենայի համար + 10% /0.85լ/ մինչև 0.5 միլիոն բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում + 15% /1.275լ/ լեռնային տեղանքում աշխատանքի ժամանակ՝ ծովի մակերևույթից 1700-2000 մ Հրազդան, Ապարան քաղաքների համար և մի շարք գյուղերի, որը կազմում է **11.475** լիպր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նորմատիվով սահմանված բենզինի քանակից ավելի քիչ բենզին է հաշվարկվել: 2018 թվականի առաջին և երկրորդ եռամսյակներում նույնիսկ 11.5 լիպր բենզինի հաշվարկի պարագայում տրամադրվել է ավելի քիչ բենզին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ աճել է բենզինի գինը: Մասնավորապես՝

ԲՍՓՀ-ի անվանումը	բենզինի անհրաժեշտ քանակի հաշվարկը	տրամադրված բենզինի քանակը՝ 2018 թվականի 1-ին եռամսյակ	տրամադրված բենզինի քանակը՝ 2018 թվականի 2-րդ եռամսյակ
Լոռու մարզի թիվ 1 ԲՍՓՀ	128	80	120
Երևանի թիվ 7 ԲՍՓՀ	97	40	80
Արագածոտնի մարզի ԲՍՓՀ	103	50	90
Կոտայքի մարզի ԲՍՓՀ	62	30	40
Գեղարքունիքի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	189	140	140
Գեղարքունիքի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	175	140	160

Շիրակի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	95	50	80
Շիրակի մարզի թիվ 2 ԲՍՓՀ	93	50	80
Արարատի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	81	50	70
Արմավիրի մարզի ԲՍՓՀ	44	30	50
Վայոց Ձորի մարզի ԲՍՓՀ	194	110	0
Սյունիքի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	196	90	0
Տավուշի մարզի ԲՍՓՀ	248	180	210

2018 թվականի ապրիլ ամսից 4 ավտոմեքենա չի շահագործվել և դրանց համար նախարարի հրամանով բենզին չի հատկացվել:

Բենզինի ծախսը Գազ 31105 ավտոմեքենայի 100 կմ-ի համար սահմանվել է 12.5 լիտր, իսկ մնացած ավտոմեքենաների համար՝ 11.5 լիտր՝ հիմք ընդունելով նախարարության գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի կողմից տրված նորմատիվները:

- 2017թ. բենզինի բաշխման գործընթացից հետո որևէ հաշվառում չի իրականացվել: Մասնավորապես՝ չի պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. թիվ 37-Ն հրամանի պահանջները (Ձև ԾԽ-8). չի կազմվել ուղեգրեր և չի իրականացվել յուրաքանչյուր ուղերթի համար բենզինի ծախսի և հաշվիչի ցուցմունքի հաշվառում ու փաստաթղթավորում: 2018թ. 9 ամիսներին նույնպես բացակայում են ուղեգրերը և ծախսի փաստաթղթավորումը, իսկ մեքենայի հաշվիչի հաշվառումը կատարվել է ամսական կամ եռամսյակային կտրվածքով, որի ուսումնասիրությամբ պարզվեց, որ առկա են բազմաթիվ դեպքեր, երբ հաշվիչի ցուցիչը չի համապատասխանում նորմատիվով սահմանված ծախսին: Մասնավորապես՝ 2018թ. մայիս ամսին Երևանի թիվ 7 ԲՍՓՀ-ին հատկացվել է 80 լիտր ռեզույար տեսակի բենզին, որի նորմատիվով հաշվարկի պայմաններում մեքենայի վազքը պետք է կազմեր 696 կմ, սակայն ըստ հաշվիչի ցուցմունքի փաստացի կազմել է 440 կմ, իսկ ավելի կիրմետրերի համար նախատեսված բենզինի մնացորդը առկա չէ: Մեկ այլ դեպքում՝ ավտոմեքենայի փաստացի վազքը գերազանցում է նորմատիվով հաշվարկված և տրամադրված բենզինի պայմաններում վազքի ցուցիչին, ինչը նշանակում է, որ հանձնաժողովին կցված ավտոմեքենան նորմատիվով սահմանված ուղերթից զատ շահագործվել է նաև այլ նպատակներով (օրինակ՝ հունիս ամսին Հոգեբուժական մասնագիտության ԲՍՓՀ-ի դեպքում նորմատիվային ցուցանիշը կազմել է 696 կմ, իսկ փաստացի ցուցանիշը՝ 1575 կմ, նույն ամսին՝ Տավուշի մարզի ԲՍՓՀ-ի նորմատիվային ցուցանիշը կազմել է 1826 կմ, իսկ փաստացին՝ 2705 կմ, Արարատի մարզի թիվ 1 ԲՍՓՀ-ի նորմատիվային ցուցանիշը կազմել է 609 կմ, իսկ փաստացին՝ 1429 կմ և այլն):

Նախ. – Բենզինի բաշխումը իրականացվել է համաձայն նախարարի հրամանի, իսկ հաշվիչի ցուցմունքի հաշվառումը իրականացվել է եռամսյակային կտրվածքով, քանի որ ստացված բենզինի բաշխման հաշվետվությունը իրականացվել է եռամսյակներով: Քանի որ հանձնաժողովները գործունեությունը իրականացնում են մարզերում, բենզինը տրվել է ամսական մեկ անգամ՝ համաձայն նախարարի հրամանի, իսկ 2018 թվականի առաջին եռամսյակի համար բենզինը տրամադրվել է մարտի 23-ին: Ուղեգրերի կազմում չի իրականացվել, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016 թվականի թիվ 37-Ն հրամանի հավելվածով հաստատված Ձև ԾԽ-6 ձևում նշված է, որ ավտոմեքենան բաց է թողնվել գարաժից մեխանիկի կողմից, իսկ մեր պարագայում յուրաքանչյուր ավտոմեքենա գտնվում է տվյալ տրանսպորտային միջոցի նյութական պատասխանատու անձի մոտ, ով էլ աշխատանքի ավարտից հետո իր սեփական նյութական միջոցներով մեքենան լիցքավորում է և տանում սեփական ավտոտնակ կամ իրենց բակ:

2018 թվականին Երևանի թիվ 7 ԲՍՓՀ-ին հատկացված 80 լիտր ռեզույար տեսակի բենզինի դեպքում վազքը 696 կմ փոխարեն կազմել է 440 կմ, քանի որ մեքենան տրվել է նորոգման և հանձնաժողովը նիստին մեկնել է նյութական պատասխանատուի անձնական ավտոմեքենայով:

Քանի որ մեքենաների համար նախատեսված չէ կայանատեղի (ավտոպարկ, գարաժ), փորձաքննության նյութական պատասխանատուները՝ բժիշկ-փորձագետները, ավտոմեքենաները կայանում են իրենց փան բակում կամ սեփական ավտոտնակում: Հոգեբուժական մասնագիտացված ԲՄՓՀ-ն մեկնում է փորձաքննության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզեր, իսկ նյութական պատասխանատու անձը ապրում է Երևանում, հետևաբար մեքենան կայանում է իր փան բակում, Արարատի մարզի թիվ 1 ԲՄՓՀ-ին հարկացված ավտոմեքենայի նյութական պատասխանատու անձը ապրում է Երևանում, հետևաբար Արտաշատ, Վեդի և Մասիս մեկնում է Երևանից, իսկ բենզինի հաշվարկը կատարվում է Արտաշատից դեպի Մասիս և Վեդի կտրվածքով, Տավուշի մարզի ԲՄՓՀ-ին հարկացված փորձաքննության նյութի պատասխանատու անձը ապրում է Իջևանից 25 կմ հեռավորությամբ և հանձնաժողովին բենզին հարկացվում է Իջևանից Ալավերդի, Բերդ, Նոյեմբերյան և Դիլիջան կտրվածքով: Մեկ անգամ ևս մանրամասնում ենք, որ առավոտյան աշխատաքից առաջ և և երեկոյան աշխատանքի ավարտից հետո նյութական պատասխանատու անձը մեքենան լիցքավորում է սեփական ֆինանսական միջոցներով /գործակալության կողմից բենզին չի պրամադրվում, որով էլ պայմանավորված է ցուցիչի տարբերությունը/:

- Յուրաքանչյուր ամիս բենզինի ծախսի մեջ հաշվարկվել է նաև հանձնաժողովների կողմից տնային այցերի կազմակերպման նպատակով ուղերթներ: Ընդ որում, բոլոր ուղերթների համար հեռավորությունը հաշվարկվել է 60 կմ, ինչը իրատեսական չէ, քանի որ չի կարող բոլոր բնակավայրերը կամ Երևան քաղաքի շրջանները հանձնաժողովի տեղակայման վայրից ունենան միևնույն հեռավորությունը: Արագածոտնի ԲՄՓՀ-ում 2017թ. յուրաքանչյուր ամիս հաշվարկվել է 18 տնային այց, Արարատի թիվ 1 ԲՄՓՀ-ում՝ 17, Լոռու և Վայոց ձորի ԲՄՓՀ-ներում՝ 14, Տավուշում՝ 9 և այլն: Բոլոր այցերի հեռավորությունը հաշվարկվել է 60 կմ: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել նաև, որ բենզինի ծախսագրման ժամանակ, վառելիքի տրամադրումից հետո փաստացի տնայցերի հաշվառում չի իրականացվել:

Նախ. - *Տնային այցերի համար՝ հիմնական նստավայրից գյուղեր, հեռավորության հաշվարկը (մի ուղղությունը 30 կմ), հաշվարկվել է որպես միջին ցուցանիշ, քանի որ բենզինի պրամադրումը իրականացվել է նախարարի հրամանով և ամսական մեկ անգամ: Հանձնաժողովները իրենց կատարած փնային այցելությունները գրանցում են դրա համար նախատեսված «Տնային, հիվանդանոցային պայմաններում կամ քրեակադրոնական հիմնարկներում բժշկացողական փորձաքննություն իրականացված անձանց հաշվառման» գրանցամատյաններում, որը ստորագրվում է փորձաքննվող անձի կողմից:*

➤ **Զբաղվածության պետական գործակալություն և տարածքային կենտրոններ**

2017թ. զբաղվածության գործակալության աշխատակազմի ընթացիկ ծախսերի ֆինանսավորումը կազմել է 1,105,123.37 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 1,105,116.17 հազ. դրամ: (ՀԱՎԵԼՎԱԾ 1 և 4)

01.01-01.10.2018թթ. ժամանակահատվածի համար հաշվետվության (Ձև 2) մեջ վերադասի կողմից տարեկան նախահաշվում ընդհանուր ընթացիկ ծախսերի գծով կատարած փոփոխությունները 527,423.8 հազ. դրամի փոխարեն ներկայացրել է 223,781.6 հազ. դրամ (տարբերությունը՝ 303,672.2 հազ. դրամ): 2018թ. 9 ամիսների ընդհանուր փաստացի ծախսերի մեջ ներառվել են կապի ծառայությունների գծով 12.9 հազ. դրամ և տրանսպորտային նյութերի գծով 443.4 հազ. դրամ ծախսեր, այն դեպքում, երբ նախահաշվով նման ծախսեր պլանավորված չեն եղել, քանի որ վերոնշյալ ծառայությունների գծով ծախսերն իրականացնում է նախարարությունը:

Նախ. - *01.01-01.10.2018թ. ժամանակահատվածի համար Գործակալության հաշվետվության մեջ /ձև2/ փարեսկզբի հաստատված նախահաշիվը կազմում է 206336.6 հազ.դրամ, փարեկան ճշգրտված նախահաշիվը կազմում է 733760.4 հազ.դրամ, փոփոխությունը փարեսկզբի նկատմամբ կազմում է ճիշդ 527423.8 հազ. դրամ: Հաշվետվությունը ուղարկված է Mulberry համակարգով:*

Քանի որ 2018թ. ֆինանսական հաշվետվությունների մեջ /Հ7,Հ4/ փարեսկզբին առկա է եղել դպ պարտք՝ պահեստավորված միջոցներ 4214 և 4264 հ, նրանց ծախսումը կատարվել է 2018թ.ընթացքում և,

հերևաբար, ներկայացվել հաշվետվության փաստացի ծախսերի մեջ: 2018թ. նախահաշվով չնախատեսված լինելը տվյալ դեպքում էական չէ:

➤ **Գնումների ընթացակարգերի կազմակերպման վերաբերյալ**

- ՊՈԱԿ-ների կարիքների համար գնումների գործընթացի իրականացումը նախարարության կողմից չի համապատասխանել կենտրոնացված գնումների տրամաբանությանը: ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 90-րդ կետի համաձայն՝ մեկ վարչատարածքային միավորման սահմաններում գտնվող կազմակերպությունների կարիքների համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները համախմբվում են մեկ չափաբաժնում, ինչը տվյալ դեպքում հնարավոր է կիրառել միայն Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, որտեղ նախարարության ենթակայության տակ գտնվում են մեկից ավելի ՊՈԱԿ-ներ: Մնացած դեպքերում՝ Վարդենիսի, Գավառի, Դիլիջանի, Խարբերդի համապատասխան կազմակերպությունների կարիքների համար մրցույթը անցկացվել է ըստ առանձին ՊՈԱԿ-ների, ինչն իր բովանդակությամբ կենտրոնացված գնման գործընթաց չի հանդիսանում, այլ ընդամենը նույն մրցույթը ՊՈԱԿ-ի փոխարեն կազմակերպել է նախարարության համապատասխան ստորաբաժանումը:

Նախ. – Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների տրամաբանությունը մեկնաբանվում է ոչ ամբողջությամբ: Հղում է արվում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման (հավանաբար որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի) (այսուհետ՝ Կարգ) 90-րդ կետին, նշելով որ մեկ վարչատարածքային միավորում գտնվող կազմակերպությունների կարիքների համար ապրանքները, աշխատանքները և ծառայությունները միավորվում են մեկ չափաբաժնում: Ստորև ներկայացնվում է Կարգի վերոնշյալ կետը ամբողջությամբ. «90. Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանում ներառված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ գնման գործընթացները կազմակերպում է վերադաս պատվիրատուն: Ընդ որում, **հնարավորության դեպքում մեկ վարչատարածքային միավորումում գտնվող կազմակերպությունների կարիքների համար գնվելիք ապրանքները, աշխատանքները և ծառայությունները համախմբվում են մեկ չափաբաժնում կամ չափաբաժինները ձևավորվում են հաշվի առնելով առանձին կազմակերպությունների կարիքները:** Գնման ընթացակարգի ընտրությունն իրականացնում է վերադաս պատվիրատուն՝ հիմք ընդունելով օրենքի և սույն կարգի պահանջները՝ բացառությամբ բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման գործընթացի:»: Կարծում ենք որ վերոնշյալ կետի կոնտեքստից կտրված և ոչ ամբողջական ներկայացումը պատահականության արդյունք է:

Հարկ է նշել, որ կենտրոնացված գնումների տրամաբանությունը ամենևին չի հանգում չափաբաժինները մեխանիկորեն միասնականացնելուն: Կենտրոնացված կարգով գնումների իրականացման առավելություններից են.

ա/ թղթայինի փոխարեն էլեկտրոնային գործիքների կիրառումը, ինչը շեշտակիորեն նվազեցնում է առկա ռիսկերը,

բ/ էլեկտրոնային հարթակների կիրառմամբ մրցույթների թափանցիկության ապահովումը և մասնակիցների համար հասանելիությունը, հավասար մրցակցային դաշտի ապահովումը: Այսպես հարկ է նշել, որ կենտրոնացված գնումների կիրառմամբ շեշտակիորեն աճել է մասնակցության մակարդակը: 2017 թվականից տեղեկություն թղթային եղանակով կազմակերպվող գնման ընթացակարգերի առավելագույնը 3-4 մասնակիցների փոխարեն կենտրոնացված գնումների ընթացքում մասնակիցների թիվը որոշ դեպքերում հասել է մի քանի տասնյակի:

գ/ մասշտաբի էֆֆեկտ: Կենտրոնացված կարգով իրականացվող գնման ընթացակարգերի արդյունքում նույն տեխնիկական բնութագիր ունեցող գնման առարկաների միավորի գները զգալիորեն նվազել են:

դ/ առկա ռեսուրսների /աշխատանքային/ ռացիոնալ կառավարում: Մինչև ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ների գնումների կենտրոնացումը յուրաքանչյուր կազմակերպություն իր գնման ընթացակարգերը կազմակերպում էր իր համակարգողի և գնահատող հանձնաժողովի միջոցով: Թվով 21 կազմակերպությունների գնումների մեծ մասը կենտրոնացվելուց հետո գնման ընթացակարգերը

Նախարարության կարիքների համար իրականացվող գնման ընթացակարգերին զուգահեռ/ իրականացվել են երկու գնումների համակարգողների կողմից:

- Կենտրոնացված գնումները նվազեցնում են պատասխանատվությունը: Ընթացակարգերի ժամանակ գնահատող հանձնաժողովը ձևավորվել է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 89-րդ կետի 1-3 ենթակետերի համաձայն, որի արդյունքում հինգ անդամից բաղկացած հանձնաժողովում յուրաքանչյուր ՊՈԱԿ ունենում է մեկական ներկայացուցիչ, որը փաստացի ապահովում է ֆորմալ ներկայություն և չի կարող որոշիչ դեր ունենալ գնման գործընթացի որոշումների կայացման գործում: Արդյունքում ՊՈԱԿ-ը գնման գործընթացի կազմակերպման համար որպես այդպիսին որևէ տեղեկատվության չի տիրապետում և պատասխանատվություն չի կրում, իսկ ամբողջ լիազորությունը կենտրոնանում է նախարարության մեկ ստորաբաժանումում, որն անբարեխիղճ մոտեցում ցուցաբերելու դեպքում կարող է լուրջ ռիսկերի հանգեցնել:

Նախ. - Կենտրոնացված գնումները նվազեցնում է պատասխանատվությունը դրույթն անհասկանալի է: Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, քարտուղարը, կազմակերպությունները /որպես պատասխանատու ստորաբաժանում/ յուրաքանչյուրն իր լիազորությունների մասով իրականացնում են իրենց պարտականությունները և պատասխանատու են դրանք օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան կատարելու համար: Կենտրոնացված գնումները մեկ ստորաբաժանումում կենտրոնացնելու խնդիր ընդհանրապես առկա չէ, քանի որ յուրաքանչյուր կազմակերպություն ինքնուրույն է մշակում իր գնման հայտը /ներառյալ տեխնիկական բնութագիր և գնման ժամանակացույց/: Այս դեպքում կենտրոնացված գնումները մեր կողմից դիտարկվում է ռեսուրսները ռացիոնալ բաշխելու տեսանկյունից՝ կազմակերպության կարիքների համար կնքվում է գնման պայմանագիր /ըստ իր կողմից ներկայացված գնման առարկաների տեխնիկական բնութագրերի/, որի շրջանակներում իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է կազմակերպությանը: Ինչ վերաբերում է ֆորմալ ներկայությանը և գնահատող հանձնաժողովի անդամների ծայնի ոչ որոշիչ լինելուն, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի անդամների որոշումները պետք է հիմնվեն բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների վրա, իսկ այդ դեպքում թե որ կազմակերպության ներկայացուցիչն է ներգրավվել որպես գնահատող հանձնաժողովի անդամ էական չէ:

- Կենտրոնացված գնումների համակարգը առաջացնում է մասնակցության մի շարք սահմանափակումներ: Մասնավորապես, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 65-րդ կետի՝ «մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման պայմանագրեր, որոնց ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի գինը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նույն որոշման 67-րդ կետի համաձայն՝ մասնակիցներին ներկայացվող «ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից: Գնման գործընթացը կենտրոնացված եղանակով կազմակերպելու պարագայում, չափաբաժինների խմբավորման արդյունքում, չափաբաժնի արժեքը դրամային արտահայտությամբ բարձրանում է, ինչը անհնարին է դարձնում փոքր, միջին կամ նոր ձևավորվող ընկերությունների մասնակցությունը: Որպես օրինակ, Երևան քաղաքի սննդամթերքի ձեռքբերման նպատակով կենտրոնացված կարգով հայտարարված մրցույթի «Միս տավարի ոսկորոտ» գնման առարկայի նախահաշվային գինը կազմել է 33,305.0 հազ. դրամ, ինչը ենթադրում է, որ տվյալ չափաբաժին կարող են մասնակցել միայն այն ընկերությունները, որոնք ունեն նախկինում 16,652.5 հազ. դրամը գերազանցող պայմանագիր, իսկ կարտոֆիլի դեպքում՝ 3,450.0 հազ. դրամ պայմանագիր ունեցող ընկերությունները և այլն: Վերոնշյալ պայմանների առկայության դեպքում, սահմանափակվում է փոքր, նորաստեղծ և բուն արտադրական գործունեություն ծավալող ընկերությունների մասնակցությունը, իսկ ընթացակարգին մասնակցում են միայն խոշոր ընկերությունները, ինչը նվազեցնում է մասնակիցների քանակը և էապես ազդում է մրցակցության մակարդակի վրա:

վերոնշյալով պայմանավորված չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի պահանջները, այն է՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում տեղի չի ունեցել:

Նախ. - Կենտրոնացված գնումների համակարգը չափաբաժինների միասնականացմամբ մասնակիցների թիվը ոչ միայն չի նվազել, այլ շեշտակիորեն աճել է: Միևնույն ժամանակ բարձր մրցակցության պայմաններում զգալիորեն նվազել են գնման առարկաների միավորների գները: Կազմակերպությունների 2017 թվականի կարիքների համար կենտրոնացված կարգով կազմակերպված սննդամթերքի գնման ընթացակարգերի արդյունքում տնտեսվել է շուրջ 254 մլն. դրամ: Միևնույն ժամանակ անհասկանալի է, թե որ գործողությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի պահանջները, քանի որ կենտրոնացված կարգով գնման ընթացակարգեր կազմակերպվելիս առաջնորդվել է բացառապես գործող գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ պահպանելով օրենսդրության բոլոր պահանջները :

- Խնդրահարույց է կենտրոնացված կարգով գնումների կազմակերպման և իրականացման ժամանակագրությունը: Մասնավորապես՝ 2017թ. և 2018թ. 9 ամիսներին սննդամթերքի ձեռքբերման մրցույթներն անցկացվել և պայմանագրերը կնքվել են տվյալ տարվա փետրվարի 15-ից հետո: Նախքան պայմանագրերի կնքելը ՊՈԱԿ-ներին հանձնարարվել է անհրաժեշտ կարիքները բավարարել ինքնուրույն՝ տեղում հրատապ մրցույթներ իրականացնելու միջոցով, և սա այն դեպքում, երբ գնումների գործընթացի կենտրոնացման արդյունքում ՊՈԱԿ-ներում կրճատվել են գնումների համակարգողի հաստիքները: Արդյունքում, 2017-2018թթ. ընթացքում բազմաթիվ ՊՈԱԿ-ներում վերոնշյալ հրամանի կատարումն ապահովելու նպատակով գնումների համակարգողի գործառույթն իրականացրել են ՊՈԱԿ-ի այլ աշխատողներ, ովքեր չեն ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով պահանջվող համապատասխան որակավորում (այդպիսի դեպքեր արձանագրվել են «Նորքի տուն-ինտերնատ», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձույթի կենտրոն» ՊՈԱԿ-ներում և այլն): Արդյունքում, ՊՈԱԿ-ներում իրականացվող հրատապ մրցույթների հետևանքով մի շարք ապրանքներ ձեռք են բերվել ավելի բարձր գներով, իսկ գործընթացներն իրականացվել են օրենսդրական պահանջների զգալի խախտումներով, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ գնումների օրենսդրությունը շրջանցելով (օրինակ՝ «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձույթի կենտրոն» ՊՈԱԿ-ում մրցույթ ընդհանրապես չի անցկացվել):

Նախ. - Կազմակերպությունների 2017 թվականի կարիքների համար սննդամթերքի գնման ընթացակարգերը հայտարարվել են 2016 թվականի դեկտեմբեր ամսին, իսկ 2018 թվականի կարիքների համար՝ 2017 թվականի նոյեմբեր ամսին: Պայմանավորված մի շարք չափաբաժինների մասով գնման առարկաների առավելագույն միավորի գնի գերազանցման, նաև բողոքարկման գործընթացի հետ, փարեսկզբին գնման պայմանագրերը դեռ կնքված չեն եղել, ինչով պայմանավորված կազմակերպություններին թույլատրվել է ինքնուրույն իրականացնել գնման ընթացակարգեր՝ մինչև կենտրոնացված կարգով իրականացված գնման ընթացակարգերի արդյունքում պայմանագրերի կնքումը: Տվյալ դեպքում ևս վերլուծությունը ցույց տվեց կենտրոնացված գնումների առավելությունը տեղում թղթային եղանակով կազմակերպվող գնման ընթացակարգերի համեմատ թե՛ մասնակցության, թե՛ մրցույթի արդյունքում ձևավորված գնման առարկաների միավորների գների տեսանկյունից:

- Չի պահպանվել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 90-րդ կետի պահանջները, ինչի հետևանքով 2017թ. սննդամթերքի ձեռքբերման նպատակով մրցույթի գնումների պլանը հրապարակվել է ապրանքախմբի ամբողջական քանակի համար, մինչդեռ դրանից հետո մրցույթներն իրականացվել են ըստ առանձին մարզերի:

Նախ. - Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանը կարող էր հրապարակվել միայն առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու, քանի որ Նախարարությունում տվյալ գնման համար առկա ֆինանսական միջոցները բացակայում էին: Այդ ֆինանսական միջոցները փրամատրվում են կազմակերպություններին, որոնք հետագայում կենտրոնացված կարգով իրականացվող գնման ընթացակարգերում ներառված գնման առարկաները ներառում են իրենց գնումների պլաններում՝ նախահաշվային գներով: Նախահաշվային գումարներով գնումների պլանները կարող են հրապարակվել

նաև մինչև կենտրոնացված կարգով գնման ընթացակարգ հայտարարելը, եթե Կազմակերպություններին արդեն հասկացված են ֆինանսական միջոցներ:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Նախարարությունը իր ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար կենտրոնացված կարգով գնումների գործընթացը կազմակերպել է սերտորեն համագործակցելով ոլորտի պետական լիազոր մարմնի («Վ ֆինանսների նախարարություն») հետ, օգտվել վերջինիս մեթոդական և խորհրդարարական աջակցությունից, ստացել բազմաթիվ գրավոր և բանավոր պարզաբանումներ՝ գործընթացի ճիշտ և անթերի կազմակերպման նպատակով: Ընդ որում կենտրոնացված կարգով կազմակերպված գնման ընթացակարգերը ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից բազմիցս գնահատվել և որակվել են որպես լավագույնս կազմակերպված, խիստ արդյունավետ և օրինակելի գործընթաց պետական գնումների կազմակերպման ոլորտում, ինչի մասին արտահայտվել են բազմաթիվ հրապարակային ելույթներում, զեկույցներում և հաշվետվություններում:

➤ Նախարարության կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ

- Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման մրցույթների հրավերներով 2017-2018թթ.-ին մի շարք չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերում սահմանվել է, որ պարագաները պետք է լինեն գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկվող կամ համարժեք նյութերով և գերմանական տեխնոլոգիայով արտադրվող: Վերոնշյալ տեխնիկական բնութագիրը պարունակում է ուղիղ հղում՝ գերմանական տեխնոլոգիայով արտադրվող, որը սահմանափակում է այլ տեխնոլոգիայով և համարժեք կամ ավելի բարձր որակի արտադրանք ունեցող ընկերությունների մասնակցությունը և հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին, համաձայն որի՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրա: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Անհրաժեշտ է նշել նաև, որ վերոնշյալ անհամապատասխանությունը արձանագրվել էր նաև ՀՀ վերահսկիչ պալատի նախորդ վերահսկողության արդյունքում:

Նախ. - «Օթթո-Բոք» ֆիրմային նշանին, հայրենական կամ գերմանական տեխնոլոգիաներին հղումներ արվել են մինչև 2018 թվականը նախարարության կողմից կազմակերպվող պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերի հրավերներով սահմանված տեխնիկական բնութագրերում: Ընդ որում, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան հղումների հետ միաժամանակ կիրառվել է «կամ համարժեք» բառակապակցությունը, որի պարագայում նույն կամ ավելի բարձր որակական չափանիշներին համապատասխանող ծառայություններ մատուցող կազմակերպությունները որևէ կերպ չէին կարող սահմանափակված լինել գնման ընթացակարգերին մասնակցելու տեսանկյունից: Վերոնշյալ հղումները կիրառվել են այն պարճառով, որ պատասխանատու ստորաբաժանումը չէր կարող հստակ սահմանել պահանջվող ծառայությունների մասնագիրը՝ առանց այդ հղումների: 2017 թվականի ընթացքում կատարված մեծ ծավալի աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ 2018 թվականի կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների տեխնիկական բնութագրերը միասնականացնել՝ բացառելով որևէ հղում: Հարկ է նշել, որ 2019 թվականի հունվար ամսից պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունները շահառուներին տրամադրվում են հավասարազրեկ հիման վրա՝ իրենց նախընտրած և որակավորված մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

- Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերումն իրականացվել է առանց մրցույթի, 2017թ.՝ ԲԸԱՀ, 2018թ.՝ ՄԱ կիրառման միջոցով, իսկ մեկ անձից գնում իրականացվել է հիմք ընդունելով ՏՄՊԴՀ կողմից 2010թ. սեպտեմբերի 22-ի որոշումը, որը սահմանել է թվով 9 ծառայությունների նկատմամբ «Նորք

սոցիալական ծառայությունների տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի մենաշնորհային դիրքը: Մինչդեռ հիմնադրամի հետ կնքված պայմանագրով նշված 9 ծառայություններից զատ պայմանագրում ներառվել է մեկ տասնյակից ավելի այլ ծառայություններ (օրինակ՝ լոկալ ցանցի սպասարկում, վեբ կայքի սպասարկում, համակարգչային սարքավորումների վերանորոգում և այլն), որոնց համար մենաշնորհային դիրք հիմնադրամը չունի և չի կարող ունենալ: Արդյունքում չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ բաժնի և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի պահանջները: Միաժամանակ, 2017թ. սույն ընթացակարգի գնումների համակարգող սահմանված է եղել նախարարության աշխատակազմի գնումների համակարգման բաժնի պետը, որը չի ունեցել օրենսդրությամբ սահմանված որակավորում և չէր կարող լինել գնումների համակարգող:

Նախ. - Հիմնադրամի կողմից Նախարարությանը տրամադրվող ծառայությունները փոխկապակցված են: Փաթեթային մատուցվող ծառայությունները միմյանցից տարանջատելով և դրանցից որոշները մրցութային եղանակով ձեռք բերելու պարագայում առանձին ծառայությունների մասով ծախսերը կարող են շեշտակիորեն աճել և առկա ֆինանսավորման չափի պահպանման պարագայում անհրաժեշտ ծավալի ծառայություններ նախարարությունը կարող էր չստանալ: Ամբողջական փաթեթով ծառայությունների ստացումը շատ ավելի արդյունավետ էր, բարձրակարգ մասնագետները սպասարկելով նախարարության համակարգի տեղեկատվական շտեմարանները, լոկալ և արտաքին ցանցերը և մատուցելով տեղեկատվական համակարգերի սպասարկման հետ կապված ամբողջական ծառայություններ, ապահովում էին համակարգի բնականոն և անխափան գործունեությունը: Հարկ է նշել, որ 2019 թվականի հունվարից համապատասխան ծրագիրը դարձել է դրամաշնորհային և հիմնադրամի հետ այլևս կնքվում է ոչ թե գնման պայմանագիր, այլ մրցույթի արդյունքում դրամաշնորհային պակասնագիր:

- Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված Գնանշման հարցման ընթացակարգի միջոցով մրցույթի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին և առկա մի շարք թերությունները, անհամապատասխանություններն ու սահմանափակումները խաթարել են մրցակցության հավասար պայմանների սկզբունքները: 2017թ. և 2018թ. 9 ամիսներին հաղթել և ծառայությունները մատուցել է միևնույն «Հունան Մանթաշյան» ԱԶ, որի հետ կնքվել է համապատասխանաբար՝ 7,700.0 հազ. դրամի և 7,000.0 հազ. դրամի պայմանագրեր: Արձանագրված անհամապատասխանությունների թվին են դասվում մասնավորապես.
 - ՀՀ 10 մարզերում իրականացվող ծրագրերը խմբավորվել են մեկ չափաբաժնում, ինչի արդյունքում սահմանափակվել է տեղական, ոչ խոշոր՝ մանր ու միջին կազմակերպությունների մասնակցությունը: Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 65-րդ կետի՝ «մասնագիտական փորձառություն» չափանիշը և նույն որոշման 67-րդ կետի՝ մասնակիցներին ներկայացվող «ֆինանսական միջոցներ» չափանիշը դարձել է ավելի խիստ: Մասնավորապես՝ նշված մրցույթին մասնակցելու համար որպես մասնագիտական փորձառություն չափանիշ պարտադիր պայման է նախորդ երեք տարիների ընթացքում նմանատիպ 3,500.0 հազ. դրամ արժեքով պայմանագրի առկայությունը: Միաժամանակ, ծրագիրն անցկացվել է 10 մարզերում և Երևան քաղաքում, որոնք աշխարհագրորեն տեղակայված են տարբեր վայրերում, ուստի մեկ չափաբաժնով ներկայացնելու դեպքում՝ այն իր մեջ ներառում է նաև մի շարք տրանսպորտային և այլ հավելյալ ծախսեր, որոնք հանգեցնում են մատուցվող ծառայության գնի բարձրացմանը: Վերոնշյալ պայմանների առկայության պարագայում, ինչպես սահմանափակվել է տեղական, փոքր, նորաստեղծ և բուն արտադրական գործունեություն ծավալող ընկերությունների մասնակցությունը, այնպես էլ նվազել է մասնակիցների քանակը, ինչը էապես ազդում է մրցակցության վրա: Ընթացակարգին հնարավորություն են ունենում մասնակցել միայն խոշոր ընկերությունները: Այսպիսով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում տեղի չի ունեցել:

Նախ. - Երևան քաղաքում և ՀՀ 10 մարզերում իրականացվող ծրագրերը տեխնիկական բնութագրում խմբավորված են, համաձայն ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման հավելված 7-ի 5-րդ կետի՝ « 5. Գործակալությունը կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ Հայաստանի

Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ելնելով աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսման արդյունքներից: Ծրագրի իրականացման մարզի կամ Երևան քաղաքի ընտրությունը պայմանավորված է հետևյալ նվազագույն պայմաններով՝

- 1) Երևան քաղաքում՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, արտադրական ծավալների ավելացման, ներդրումների իրականացման կանխատեսումների արդյունքում թափուր աշխատատեղերի հայտ ներկայացրած առնվազն 50 գործափուի, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առնվազն 25 գործափուի առկայության դեպքում.
- 2) Երևան քաղաքում առնվազն 200, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում առնվազն 50 թափուր աշխատատեղի հայտի առկայության դեպքում.
- 3) Երևան քաղաքում առնվազն 200 աշխատանք փնտրող անձի, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում առնվազն 50 աշխատանք փնտրող անձի մասնակցության դեպքում:»:

Ելնելով վերոգրյալից տեղեկացվում է, որ նախապես հնարավոր չէ ծրագրի իրականացման վայրը և ժամկետները կանխատեսել: Ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի, տոնավաճառի կազմակերպման վայրի և ժամկետի ընտրությունը ձևավորվում է փարվա ընթացքում զբաղվածության փարածքային կենտրոններից ստացված այն տեղեկությունների համաձայն, որոնք բավարարում են ՀՀ կառավարության հիշյալ որոշմամբ սահմանված նվազագույն պայմաններին:

- Բժշկա-սոցիալական և Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների գնումների գործընթացը իրականացվել է առանց մրցույթի՝ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի կիրառման միջոցով, որի արդյունքում «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի հետ 2017թ. և 2018թ. կնքվել է համապատասխանաբար՝ 181,950.2 հազ. դրամ և 181,450.2 հազ. դրամ արժեքով պայմանագրեր: Որպես մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի ընտրության հիմնավորում, նախարարության կողմից ներկայացվել է ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 23-րդ կետի 8-րդ ենթակետի կիրառումը: Վերջինս, սակայն, վերաբերվում է շահառուի կողմից հիվանդանոցային բուժօգնության, ներառյալ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները, ծառայությունների ձեռքբերմանը: Մինչդեռ նախարարության կողմից ձեռք է բերվում ոչ թե ծառայությունները, այլ նշված ծառայությունների մատուցումը այլ շահառուներին: Միաժամանակ, պետք է նշել նաև, որ առկա չէ հիմնավորում անգամ մեկ անձից գնման պարագայում «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի ընտրության մասին, քանի որ համանման ծառայություններ մատուցվում են նաև ՀՀ-ում գործող մի շարք այլ բժշկական հիմնարկների կողմից:

Նախ. - Վերոնշյալ ծառայությունների գնման գործընթացն իրականացվել է «մեկ անձ» գնման ընթացակարգով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 8-րդ տողը՝ այն է «հիվանդանոցային բուժօգնություն՝ ներառյալ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները»: Հիմնավորումն ամբողջությամբ համապատասխանում է վերոնշյալ ծառայությունների մատուցման նկարագրին, քանի որ այդ ծառայությունները մատուցվում են սրացիոնար /հիվանդանոցային/ պայմաններում: Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ ծառայությունների ըստ տեսակների արժեքն ու տևողությունը սահմանված է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով և ըստ էության գնի նվազեցման տեսանկյունից մրցույթն այս դեպքում կիրառելի չէր: Միևնույն ժամանակ նմանատիպ ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների ներգրավելու նպատակով Նախարարությունը նախքան վերոնշյալ ծառայությունների մատուցումը 2019 թվականի կարիքների համար գնման պայմանագիր կնքելը նախաձեռնել է որակավորման գործընթաց և իր կայքում հրապարակել է համապատասխան հայտարարություն՝ մասնակիցների շրջանակն ընդլայնելու և համապատասխան մասնագիտական փորձառություն ու որակավորում ունեցող այլ կազմակերպությունների հետ նույնպես գնման պայմանագիր կնքելու նպատակով:

- 2017թ. և 2018թ. 9 ամիսների գնումների համակարգողի գործառույթներն իրականացնողներից միայն մեկն է ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով պահանջվող

համակարգողի որակավորում (Լ.Գ), իսկ տարբեր մրցույթների գնումների համակարգողի գործառույթներն իրականացրած Կ. Բաբախանյանը (բաժնի պետ), Ա. Հովակիմյանը և Լ. Օրդուխանյանը չեն ունեցել անհրաժեշտ որակավորում և հետևաբար իրավասու չեն եղել գնման գործընթաց համակարգելու համար:

Նախ. - *Գնումների համակարգողների որակավորում չունեցող անձանց կողմից գնման ընթացակարգերի կազմակերպումը պայմանավորված է եղել գերծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով և համապատասխան մասնագետներով աշխատակազմը համայրելու հնարավորության բացակայությամբ: Ներկա պահին նախարարության կողմից բոլոր գնման ընթացակարգերը իրականացվում են գնումների համակարգողի որակավորում ունեցող մասնագետների միջոցով:*

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասով

Արձանագրության III-րդ մասում նշված անհամապատասխանությունների առնչությամբ տեղեկացնում են, որ

1. Տարածքի օգտագործման համար 22.06.2015թ. կնքված եռակողմ պայմանագրի համաձայն 2017թ. ստացված գումարը և «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից աճուրդով վաճառված տրանսպորտային միջոցի դիմաց ստացված գումարը ՊՈԱԿ-ի կողմից՝ «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թույլտվությամբ, օգտագործվել է շինանույթ գնելու համար և կազմակերպության աշխատողների ուժերով տուն-ինտերնատի ֆոյեում կատարվել է շատ անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ (տարածքը 1991 թվականից հետո չէր վերանորոգվել): Սուբսիդիան դա պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է և մեր կարծիքով կազմակերպության կողմից իրականացված գործունեության արդյունքում չի խախտվել «Կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշման պահանջները: Նշեմ նաև, որ «Կառավարության 15.02.2018թ. N163-Ն որոշմամբ սահմանվել է «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթի օգտագործման կարգը, որով էլ ուղղորդվել ենք սկսած 2018 թվականի 2-րդ եռամսյակից:

2. 30.12.2016-09.01.2017թթ. մահացած 4 անձիք սննդամթերքի բաց թողնման ճաշացուցակ-պահանջագրերում հաշվառվել են քանի, որ նշված ժամանակահատվածը ընդգրկում է ամանորի տոնական օրերը և այդ օրերի համար 2016թ. տարվա վերջին աշխատանքային օրը՝ 30.12.2016թ. ժամը 17.00-ին կազմակերպության հաշվապահի և դիետաբանի կողմից նախապես կազմվել է հաջորդ ոչ աշխատանքային օրվա և ամանորի տոնական օրերի սննդամթերքի բաց թողնման ճաշացուցակ-պահանջագրերը: Մահացած 4 անձանց դուրս ենք գրել սննդի հաշվառումից առաջին իսկ աշխատանքային օրը:

3. Երրորդ պարբերությունում նշված անհամապատասխանության առնչությամբ նշեմ, որ Ժ. Ռ. Ղ-ին, որպես խնամվող շահառուի՝ ստուգումն ընդգրկող ժամանակահատվածում աշխատավարձ է վճարվել միայն 2017 թվականի 5 ամիսների համար, քանի որ 31.05.2017 թվականին Ժ. Ղ. իր դիմումի համաձայն դուրս է գրվել տուն ինտերնատից բնակվելու՝ ք.Երևան Նոր-Նորքի 1-ին զանգված, Ջուլայի փողոց շենք 3, բնակարան 53 հասցեյում: Ձեր ուշադրությունն են հրավիրում նաև այն կարևոր հանգամանքի վրա, որ Ժ. Ղ-ն ՊՈԱԿ-ի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվել 16.05.1994 թվականից, իսկ 26.06.2009 թվականին ստացել է 3-րդ խմբի հաշմանդամություն և 24.07.2009 թվականին համաձայն «Կառավարության 29.05.2015թ. թիվ 1112-Ն որոշման 41-րդ կետի 2) ենթակետի՝ ուղեգրվել է «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ (ուղեգիր թիվ 147) և մինչև 31.05.2017 թվականը հանդիսացել է ՊՈԱԿ-ի շահառու: Այսինքն, Ժ. Ղ-ն (ծնված 01.07.1951թ.) շահառու է դարձել ոչ թե «Կառավարության 29.05.2015թ. թիվ 1112-Ն որոշման 41-րդ կետի 1) ենթակետի համաձայն, այն է՝ որպես տարեց, միայնակ, չաշխատող կենսաթոշակառու, որին հղում է արված վերոնշյալ պարբերությունում, այլ 41-րդ կետի 2) ենթակետի համաձայն, այսինքն որպես տասնութ տարին լրացած, հաշմանդամություն ունեցող անձ, որի դեպքում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու և աշխատավարձ ստանալու սահմանափակում չկա:

4. Աշխատանքի վարձատրության հողվածով նախատեսված գումարների և հաստիքների վերաբերյալ պարբերությունում նշված «2017-2018թթ. հաստիքացուցակում ավելի է նախատեսվել վերելակի սպասարկողի 0.5 դրույք հաստիքային միավորը» անհամապատասխանության առկայությունը կապված է այն հանգամանքի հետ, որ պետք է սպասարկվի 4 վերելակ (2 մարդատար և 2 բեռնատար), որից շուրջօրյա օգտվում են 230 ծեր և հաշմանդամություն ունեցող շահառուներ: Վերելակները հատկապես ծանրաբեռնված են աշխատում նախաճաշին, ճաշին և ընթրիքին, երբ շահառուները խմբերով իջնում են ճաշարան: Միաժամանակ վերելակներից օգտվում են նաև խոհանոցի աշխատողները՝ անկողնային հիվանդներին սնունդը սենյակներում մատուցելու համար: Վերելակների անխափան աշխատանքը հատկապես կարևորվում է շահառուների տարիքային և առողջական առանձնահատկություններից ելնելով: Հաշվի առնելով նշված հանգամանքը ՊՈԱԿ-ի կողմից 2017-2018թթ. հաստիքացուցակներում նախատեսվել և նախարարի հաստատմանն է ներկայացվել վերելակի

սպասարկողի 0.5 դրույք լրացուցիչ հաստիքային միավոր, որը բխում է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշման 5-րդ կետի 3) ա. ենթակետից, այն է՝

«**ա.** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում, կազմակերպությունների հաստիքացուցակներում թույլատրելի ներառելու սույն որոշման 1-ին կետով հաստատված չափորոշիչներից տարբերվող հաստիքներ և հաստիքային միավորներ՝ հաշվի առնելով տվյալ կազմակերպության կողմից տրամադրվող ծառայության առանձնահատկությունները, խնամվողների թիվը, շենքային հնարավորությունները, զբաղեցրած տարածքի չափը, աշխարհագրական դիրքի առանձնահատկությունը և նմանատիպ այլ պայմաններ»:

ՊՈԱԿ-ի կողմից աշխատակիցներին հավելավճարներ և պարգևավճարներ հատկացվել են առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 30.06.2014թ. թիվ 81-Ա/1 հրամանի 2-րդ կետի 4-րդ ենթակետով՝ այն է պարգևատրվել են ծանրաբեռնված և իրենց պարտականությունների նկատմամբ բացառապես բարեխիղճ և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերած աշխատակիցները: Համաձայն վերոնշյալ հրամանի 2-րդ կետի 5-րդ ենթակետի՝ պարգևատրումների մասին տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով ներկայացվել է նախարարին:

5. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վերաբերյալ նշեմ, որ 2017 թվականին հիմնական միջոցներ ձեռք բերելու համար ՊՈԱԿ-ին գումար չի տրամադրվել: Ելնելով խիստ անհրաժեշտությունից 2017-2018թ.թ. նախարարության համապատասխան ստորաբաժանմանն ենք ներկայացրել գնման հայտ և մրցույթից հետո ձեռք բերել այդ ապրանքները:

6. Գնումների ընթացակարգերի կազմակերպման և կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ 2018 թվականի գնումների պլանը, պատասխանատու ստորաբաժանումների և գնումների համակարգողի վերաբերյալ տեղեկանքը տրամադրվել է ստուգումն իրականացնող ՀՀ հաշվեքննիչ պալատի պաշտանատար անձանց: Իսկ պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանված են տնօրենի համապատասխան հրամաններով (պատճենները կցվում են):

Գնումների պլանը ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվում է նախարարություն և նախարարությունը սահմանված կարգով այն հրապարակում է տեղեկագրում:

Գնումների համակարգող և գնահատող հանձնաժողովի քարտուղարի պաշտոնում գնումների համակարգողի որակավորում չունեցող և գնումների համակարգողի որակավորումը դադարեցված աշխատակիցներին ներգրավելու առնչությամբ տեղեկացնում եմ, որ ՊՈԱԿ-ի գնումները համակարգող՝ համապատասխան որակավորում ունեցող աշխատակիցը 2017 թվականի դեկտեմբերին ազատվել է աշխատանքից և ցածր աշխատավարձի պատճառով հնարավոր չի եղել սեղմ ժամկետում (ինչպես նաև առ այսօր) ներգրավել գնումների համակարգողի որակավորում ունեցող մասնագետի:

«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասով

1. Աշխատանքի վարձատրության հողվածով նախատեսված գումարների և հաստիքների վերաբերյալ՝

«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) հաստիքացուցակը կազմվել է համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի N 1292-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Նույն որոշման 5-րդ մասի 3-րդ կետի ա) պարբերության՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում, կազմակերպությունների հաստիքացուցակներում թույլատրել ներառելու սույն որոշման 1-ին կետով հաստատված չափորոշիչներից տարբերվող հաստիքներ և հաստիքային միավորներ՝ հաշվի առնելով տվյալ կազմակերպության կողմից տրամադրվող ծառայության առանձնահատկությունները, խնամվողների թիվը, շենքային հնարավորությունները, զբաղեցրած տարածքի չափը, աշխարհագրական դիրքի առանձնահատկությունը և նմանատիպ այլ պայմաններ:

Հարկ եմ համարում նշել նաև, որ Կազմակերպության հաստիքացուցակում չափորոշիչներից տարբերվող հաստիքները և հաստիքային միավորները ներառվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում:

Հաստիքացուցակի կազմումից հետո այն սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնեցման, որից հետո Նախարարության աշխատակազմի տարբեր վարչություններում կազմակերպվել են քննարկումներ ինչի աղյուսքում ձևավորվել է վերջնական հաստիքացուցակը:

Ելնելով վերոգրյալից պարզ է դառնում, որ Կազմակերպությունը հաստիքացուցակում ավել հաստիքային միավոր նախատեսել է ՀՀ կառավարության 2015 թվականի N 1219-Ն որոշման պահանջներին համապատասխան իսկ հաշվարկված և փաստացի կատարված վճարումները իրականացվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում:

2. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վերաբերյալ՝

Կազմակերպությունը 2018 թվականին փափուկ գույք և հանդերձանք հողվածով կնքված 11.477.0 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ գնման պայմանագրերից փաստացի ծախսել է 7.826.36 հազ դրամ գումար:

2019 թվականի համար նախատեսվում է ձեռք բերել շուրջ 3.665.0 հազ դրամ գումար փափուկ գույք և հանդերձանք, ինչը 2019 թվականի համար պլանավորված գումարից պակաս է շուրջ 10.085.0 հազ դրամով:

Կազմակերպությունը 2018 թվականի ընթացքում մաքրիչ և հիգենիկ նյութեր հողվածով ձեռք է բերել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի 138-Ա/1 հրամանով հաստատված չափորոշիչներին համապատասխան:

2019 թվականի ընթացքում չափորոշիչներից պակաս ձեռքբերումների դեպքում հնարավոր չի լինի Կազմակերպության խնամյալների կարիքները հոգալ սահմանված չափորոշիչներին համապատասխան:

3. Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վերաբերյալ

Կազմակերպության 2018 թվականին նախահաշվով ջրամատակարարման և ջրահեռացման 9 ամսվա ծախսը հաստատվել է 4875.0 հազ դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 5385.0 հազ դրամ, ուստի Կազմակերպությունը չէր կարող հաշվետվությամբ ներկայացնել ինչպես նաև գերազանցել նախահաշվով նախատեսված գումարը: Կազմակերպությանը 2018 թվականի համար նախատեսվել է ընդհանուր 6500.0 հազ դրամ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների գումար որից փաստացի ծախսը կազմել է 5316.2 հազ դրամ գումար:

Ինչ վերաբերվում է մարտ, ապրիլ և մայիս ամիսներին ջրամատակարարման և ջրահեռացման ծախսի առավել բարձր ցուցանիշներին ապա հայտնում եմ Ձեզ, որ դա ջրամատակարարման խողովակների վթարի հետևանք է, որի վերանորոգումից հետո փաստացի ծախսը կտրուկ նվազել է:

4. Գնումների ընացակարգերի կազմակերպման և կնքված պայմանագրերի վերաբերյալ

Կազմակերպությունը գնումների գործընթացում թույլ տված տեխնիկական վրիպակների մասին Ձեր կողմից բարձրացված խնդիրները ընդունել է ի գիտություն և Կազմակերպության գնումների գործընթացները կազմակերպող պատասխանատու աշխատակիցներին տվել է խիստ հանձնարարականներ այսուհետ նման խնդիրները բացառելու նպատակով:

Միաժամանակ հայտնում են Ձեզ, Կազմակերպության գնումների համակարգողի որակավորումը դադարեցված չի, որի մասին տեղեկատվությունը հրապարակված է www.gnumner.am կայքում: